ԳԼՈԲՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆՈՐ ԳՈՐԾՈՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9

Մայիս, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԼՈԲՈՒՍ
Վերլուծական տեղեկագիր

ГЛОБУС
Аналитический бюллетень

№ 9 (17)
Մայիս, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տարածաշրջանային նոր գործոն Հարավային Կովկասում 3

Ադրբեջան-Իսրայել համագործակցության
խորացման շուրջ 7

Նախագահական ընտրությունները Թուրքիայում 10

Гонка противоракетных вооружений 16

ՌԴ նախագահ Վ.Պուտինի այցը Ղազախստան և Թուրքմենստան 18

Հարավարևելյան Ասիա. իսլամական նոր կենտրոնի ձևավորումը 22

Թիֆլիսահայ իրականության շուրջ
նոր դիտարկումներ 25

Вопросы репатриации и оптимизации
армянской диаспоры 28

Հայաստանը միջազգային վարկանիշների համակարգում 32

Լրագրողներ առանց սահմանի 35

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ԳՈՐԾՈՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Առնչություններ Հայաստանի ազգային անվտանգությանը

ԽՍՀՄ փլուզումից ի վեր առաջին անգամ Հարավային Կովկասում երևան է գալիս տարածաշրջանային քաղաքականության նոր տիպի ու ձևաչափի գործոն։

2007թ. փետրվարի 7-ին Վրաստանի մայրաքաղաքում Հայաստանի չորս հարևաններից երեքը՝ Վրաստանի ու Ադրբեջանի նախագահները և Թուրքիայի վարչապետը, ստորագրեցին «Թբիլիսյան հռչակագիրը», որով շեշտը դնելով միմյանց միջև խորացող հաղորդակցային ու էներգետիկ համագործակցության վրա՝ իրականում, սակայն, հրապարակեցին տարածաշրջանում երեք երկրների միջև ընթացող, փաստորեն, ռազմավարական բնույթի համագործակցության վերաբերյալ իրենց քաղաքական դիրքորոշումը։

Թեև անմիջական առիթը «Բաքու-Թբիլիսի-Կարս» երկաթգծի[1] շինարարության մեկնարկի վերաբերյալ պայմանագրի կնքումն էր[2], սակայն թե՛ այդ երկաթգծի շինարարության վերաբերյալ Անկարայի, Թբիլիսիի ու Բաքվի միջև ձեռք բերված պայմանավորվածության փաստը և թե՛ հատկապես «Թբիլիսյան հռչակագրով» տարածաշրջանային համագործակցության վերաբերյալ *համատեղ* պատկերացումների ներկայացումը խոսում են Հարավային Կովկասում նոր իրավիճակի ի հայտ գալու մասին։

Չնայած Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի միջև համագործակցության խորացումը և ինստիտուցիոնալ տարրերի ձեռքբերումը ներկայումս լուրջ ազդեցություն չունի հարավկովկասյան զարգացումների վրա, սակայն հիմքեր կան պնդելու, թե առաջիկայում այն կարող է առաջնային ներգործություն թողնել Հայաստանի ազգային անվտանգության վրա՝ առնվազն հետևյալ երեք պատճառներով.

- ուրվագծվող ձևաչափը տարածաշրջանում դուրս է թողնում միայն Հայաստանին, հետևաբար՝ մեծանում է հավանականությունը, որ մենք ստանալու ենք Հարավային Կովկասում հայկական ազգային շահերի գրեթե երաշխավորված ոտնահարում,
- ստեղծվող ձևաչափում ներառված երեք պետություններից երկուսը Հայաստանի նկատմամբ վարում են առճակատման գիծ. Ադրբեջանը Հայաստանը դիտարկում է որպես սեփական ազգային անվտանգությանն ուղղված առաջնային մարտահրավեր, իսկ Թուրքիան շարունակում է Հայաստանի մեկուսացմանը միտված իր քաղաքականությանը,
- հաշվի առնելով ներկայացվածը՝ նշված պայմաններում էլ ավելի է առանձնանում Վրաստանի աշխարհառազմավարական նշանակությունը Հայաստանի համար, հետևաբար՝ անգամ միջնաժամկետ հեռանկարում Թբիլիսիում թուրքական և ադրբեջանական ազդեցությունների աճն ուղղակի սպառնալիք է Հայաստանի ազգային անվտանգությանը։

Նոր ձևաչափի ստեղծման հիմնական մեխանիզմները

Առայժմ որպես տարածաշրջանային նոր ձևաչափի ի հայտ գալու հիմնական մեխանիզմներ են հանդես գալիս Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև ընթացող էներգետիկ-հաղորդակցային համագործակցության ընդլայնումը և Թուրքիայի հետ Ադրբեջանի ու Վրաստանի ռազմաքաղաքական փոխգործակցությունը։

---

[1] Չնայած տեղեկատվական դաշտում ավելի տարածված է «Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգիծ» անվանումը, սակայն ուշագրավ է, որ իրենք՝ նախագծի մասնակիցները, որոշել են այն կոչել «Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծ»։

[2] Պայմանագիրը կնքվեց նույն օրը՝ 2007թ. փետրվարի 7-ին, Թուրքիայի ու Ադրբեջանի տրանսպորտի նախարարների և Վրաստանի տնտեսական զարգացման նախարարի միջև։

«Բաքու-Թբիլիսի-Կարս» երկաթգծի կառուցման վերաբերյալ 2007թ. փետրվարի 7-ին Թբիլիսիում կնքված եռակողմ պայմանագիրը Հայաստանի հարևան երեք երկրների միջև առկա էներգետիկ-հաղորդակցային համագործակցության վերջին օրինակն է:

Ըստ պայմանավորվածության՝ նախատեսվում է կառուցել Թուրքիան Վրաստանին կապող 98կմ ընդհանուր երկարությամբ երկաթգիծ, որից 68կմ-ը՝ թուրքական տարածքում, իսկ 30կմ-ը՝ վրացական[1]: Բացի այդ, նախատեսվում է վերանորոգել վրացական երկաթգծի, ընդհանուր առմամբ, 192կմ-ոց հատված: Նախագծի արժեքը կազմում է մոտ $600 մլն, որից Թուրքիան ծախսելու է մոտ $220 մլն, Վրաստանը՝ $202 մլն[2], ևս $178 մլն նախատեսվում է հարակից ենթակառուցվածքների կառուցման համար: Շինարարական ու վերակառուցողական աշխատանքներն սկսվելու են այս տարվա հունիսի վերջին-հուլիսի սկզբին: Ըստ նախագծի, «Բաքու-Թբիլիսի-Կարս» երկաթգծով առաջին գնացքը պետք է ընթանա 2010թ. մայիսին՝ ապահովելով տարեկան մոտ 30 մլն տոննա բեռնափոխադրություն[3]:

Ինչպես հայտնի է, «Բաքու-Թբիլիսի-Կարս» երկաթգծի նախագիծը եկավ գումարվելու 1990-ական թթ. երկրորդ կեսից Ադրբեջանի, Վրաստանի ու Թուրքիայի միջև ձևավորված էներգետիկ-հաղորդակցային համագործակցությանը:

1999թ. ապրիլի 17-ին շահագործման հանձնվեցին «Բաքու-Սուփսա (Վրաստան)» 926 կմ-ոց նավթամուղը և վրացական Սուփսա բնակավայրի[4] մոտ կառուցվող նավթային տերմինալը: Նախագիծն արժեցավ մոտ $320 մլն: Տարեկան այդ նավթամուղով հնարավոր է տեղափոխել մոտ 5 մլն տոննա նավթ:

2006թ. հուլիսի 13-ին Միջերկրական ծովի ափին գտնվող թուրքական Ջեյհան նավահանգստում Ադրբեջանի ու Վրաստանի նախագահների և Թուրքիայի վարչապետի մասնակցությամբ տեղի ունեցավ «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղի բացման արարողությունը: Նավթամուղը, որի երկարությունն է 1767 կմ և որի շինարարության վրա ծախսվել է մոտ $4 մլրդ, տարեկան Կասպիցից դեպի Միջերկրական ծով՝ Ջեյհանի նավթային տերմինալներ կարող է տեղափոխել մոտ 50 մլն տոննա նավթ:

Երրորդ՝ նախատեսվում է այս տարի շահագործման հանձնել «Բաքու-Թբիլիսի-Էրզրում (Թուրքիա)» գազամուղը, որը Կասպիցում գտնվող ադրբեջանական «Շահ-Դենիզ» գազահանքից բնական գազը պետք է տեղափոխի Վրաստան ու Թուրքիա: Ենթադրվում է, որ *«South Caucasus Pipeline»* անվամբ այդ գազամուղը կարող է հետագայում միանալ Եվրամիության կողմից իրականացվելիք *«Nabucco»* նախագծին, որը կենտրոնասիական ու մերձավորարևելյան մի շարք երկրներից բնական գազը պետք է տեղափոխի Եվրոպա՝ շրջանցելով Ռուսաստանը, կամ *«GREU»* նախագծին, որը նույն կապույտ վառելիքը՝ Վրաստանով, Սև ծովի հատակով ու Ռումինիայով պետք է հասցնի եվրոպական շուկա: Ծրագրվում է, որ «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազամուղը տարեկան կարող է տեղափոխել մոտ 20 մլրդ մ^3 բնական գազ, կառուցվող գազամուղի ընդհանուր երկարությունը կազմելու է մոտ 800 կմ, իսկ արժեքը՝ շուրջ $1 մլրդ:

Եվ վերջապես, կողմերի ծրագրերի մեջ կա երեք երկրները միմյանց կապող բարձրավոլտ էլեկտրագծերի անցկացման կետը:

---

[1] Վրաստանի միջոցով թուրքական երկաթուղային ցանցը կկապվի ադրբեջանական ցանցին՝ շրջանցելով Հայաստանը:

[2] Հարկ է նշել, որ «Բաքու-Թբիլիսի-Կարս» երկաթգծի կառուցման կապակցությամբ վրացական կողմի մոտ ծագած ֆինանսական խնդիրը լուծվեց ադրբեջանական վարկի միջոցով: Ըստ 2007թ. հունվարի 13-ին Թբիլիսիում Ադրբեջանի տրանսպորտի նախարար Ջիա Մամեդովի ու Վրաստանի տնտեսական զարգացման նախարար Գեորգի Արվելաձեի կողմից ստորագրված համաձայնագրի՝ «Բաքու-Թբիլիսի-Կարս» երկաթգծի կառուցման համար Ադրբեջանը 25 տարով Վրաստանին տրամադրեց $220 մլն վարկ՝ տարեկան 1% տոկոսադրույքով:

[3] Համեմատության համար նշենք, որ արդեն իսկ գոյություն ունեցող, սակայն Անկարայի կողմից արգելափակված Գյումրի (Հայաստան) - Կարս (Թուրքիա) երկաթգծով կարելի է տարեկան տեղափոխել մոտ 10 մլն տոննա բեռ:

[4] Գտնվում է վրացական Փոթի նավահանգստից մոտ 15 կմ հարավ:

Ներկայացվածի իմաստով պակաս կարևոր չէ Թուրքիայի հետ Ադրբեջանի ու Վրաստանի ռազմաքաղաքական համագործակցությունը: Եթե թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցության մակարդակը և ծավալները հայտնի են, ապա Երևանին հարկ է հատուկ ուշադրություն դարձնել նշված ոլորտում Անկարայի ու Թբիլիսիի միջև ընթացող փոխգործակցությանը:

Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգում Թուրքիան ներկայացված է որպես տարածաշրջանային առաջատար գործընկեր, իսկ վերջինիս հետ Թբիլիսիի հարաբերությունները բնութագրված են՝ ռազմավարական: Առանձին երկրների հետ հարաբերությունների առումով վրաց-թուրքական հարաբերությունները պաշտոնական Թբիլիսին, փաստորեն, դնում է երրորդ տեղում՝ Միացյալ Նահանգներից և Ուկրաինայից հետո: Աչքի է զարնում ռազմական ոլորտում երկու երկրների միջև ընթացող փոխգործակցությունը: 1997թ. ռազմական համագործակցության վերաբերյալ թուրք-վրացական պայմանագրի կնքումից ի վեր Միացյալ Նահանգներից հետո Թուրքիան դարձել է Վրաստանին ռազմական օգնություն ցույց տվող երկրորդ երկիրը. միջազգային գնահատականների համաձայն՝ 1998-2005թթ. ընթացքում Վրաստանի զինված ուժերին թուրքական ռազմատեխնիկական օգնության ծավալը կազմել է $37 մլն:

Նոր ձևաչափի ստեղծմանը նպաստող հիմնական գործոնները

Նոր ձևաչափի կազմավորմանը նպաստող առանցքային գործոն են ռուս-վրացական լարված հարաբերությունները: Եթե 2003թ. Սահակաշվիլու վարչակազմի իշխանության գլուխ գալուց հետո Վրաստանում ամերիկյան ազդեցության աճը նպաստեց 1991-ից ի վեր Մոսկվայի ու Թբիլիսիի միջև հակասությունների աննախադեպ խորացմանը, ապա տարածաշրջանային հարթությունում այդ հակասություններն անուղղակիորեն պատճառ հանդիսացան Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության ընդլայնմանը, քանի որ տարածաշրջանային առումով ռուս-վրացական հարաբերությունների վատթարացումը նպաստեց Թբիլիսիում առաջին հերթին Թուրքիայի արժևորմանը:

Մյուս կողմից՝ Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի էներգետիկ ճնշման մարտավարության կիրառումը հանգեցրեց Ադրբեջանից Թբիլիսիի էներգետիկ կախվածության մեծացմանը: Տարածաշրջանային հարաբերությունների առումով այդ հանգամանքը միայն նպաստում է Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան փոխգործակցության խորացմանը:

Եվ վերջապես, երրորդ՝ ոչ պակաս կարևոր գործոն կարող է հանդիսանալ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցությունը: Թեև հիմնավորված է թվում այն գնահատականը, ըստ որի՝ Հյուսիսատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցությունը բերելու է այդ երկրում թուրքական ազդեցության նվազում[1], սակայն այստեղ պետք է հաշվի առնել նաև հետևյալը.

- ՆԱՏՕ-ին Թբիլիսիի անդամակցությունն առնվազն միջնաժամկետ հեռանկարում էլ ավելի է սրելու ռուս-վրացական հարաբերությունները,
- այդ պայմաններում տարածաշրջանային աջակցության ապահովման խնդիրը կարող է էլ ավելի կարևորվել Թբիլիսիում, քան առկա է այսօր:

Հետևություններ

Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբեջանի միջև ընթացող համագործակցության խորացումը և ձեռք բերվող նոր պայմանավորվածությունների բնույթը հիմք են տալիս ենթադրելու, որ երեք երկրներին առնչվող զարգացումներից Անկարա-Թբիլիսի-Բաքու գիծն աստիճանաբար

[1] Քանի որ նվազելու է Վրաստանի անվտանգության ապահովման գործում Թուրքիայի այսօրվա դերակատարությունը՝ իր տեղը զիջելով կազմակերպությանը՝ ՆԱՏՕ-ին:

ձևափոխվում է տարածաշրջանային մեկ ընդհանուր գործոնի։ Այդ առումով, «Թբիլիսյան հռչակագրի» ի հայտ գալը բավական հստակ ցուցիչ է։

Անշուշտ, Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռյակի միջև ընթացող համագործակցությունը նոր չէ, սակայն նորությունն այն է, որ նման մակարդակի այն հասել է այժմ, և որն էլ ավելի կարևոր է՝ միտում ունի խորանալու։

Մյուս կողմից՝ Հարավային Կովկասը գտնվում է տարածաշրջանային անվտանգության նոր համակարգի ձևավորման փուլում։

Թեև քիչ հավանական է, որ մոտ ապագայում ողջ տարածաշրջանն ընդգրկվի անվտանգության մեկ ընդհանուր համակարգի մեջ, սակայն մեծ է հավանականությունը, որ առաջիկայում հարավկովկասյան երկրները վերանայեն իրենց անվտանգության ռազմավարությունները։ Այդ առումով որոշիչ գործոն կարող է դառնալ ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցությունը կամ նրա անհաջողությունն այդ գործում։

Նշված իմաստով պարզ է դառնում, որ միջնաժամկետ հեռանկարում որպես Հայաստանի ազգային անվտանգությանն առնչվող ռազմաքաղաքական հիմնական խնդիր առանձնանալու է Հարավային Կովկասում անվտանգության համակարգի ընթացող տրանսֆորմացիայի հարցը՝ հետ մղելով բուն Ղարաբաղյան հիմնախնդիրը։

Սարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

ԱԴՐԲԵՋԱՆ-ԻՍՐԱՅԵԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՇՈՒՐՋ

Ադրբեջան-Իսրայել հարաբերությունները Բաքվի արտաքին քաղաքականության և հակահայ ռազմավարության բաղկացուցիչն են: Խնդրի խորքային և բազմակողմանի լինելու պատճառով կանգ առնենք հիմնականում լոբբիստական կապերի զարգացման թեմայի վրա:

Ադրբեջանական լոբբինգի թեման ՀՀ պետական և անվտանգության առումով ուշադրության արժանի գործոններից մեկը պետք է համարել: Եթե Բաքվին հաջողվի այս կամ այն չափով իր կողմը «գրավել» հրեական միություններին, սա կարող է բազմապատկել ադրբեջանական նոր կայացող լոբբինգի հնարավորությունները, արագացնել ձևավորման գործընթացը:

Ապրիլի 12-ին Թել Ավիվում տեղի է ունեցել Ադրբեջան-Իսրայել միջազգային ասոցիացիայի *(«ԱզԻս»)* հիմնադիր խորհրդաժողովը: Այն նախկինում Իսրայելում բնակված ադրբեջանաբնակ հրեաների հասարակական կազմակերպություն է: Մշակութային այս կառույցին կից գործելու է առևտրային պալատ, որը զբաղվելու է տնտեսական հարցերով:

Խորհրդաժողովին ներկա է գտնվել Ադրբեջանի 20 հոգուց բաղկացած պատվիրակությունը Արտերկրում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովի գլխավորությամբ: Բացման ժամանակ նա ընթերցել է նախագահ Ալիևի ուղերձը, խոսել Ադրբեջան-Իսրայել «պատմական կապերի» մասին: Իբրահիմովի խոսքով՝ Ադրբեջանում ներկայումս բնակվում է 16 հազար հրեա: Իսրայելական կողմից միջոցառմանը ներկա են գտնվել փոխվարչապետ և ռազմավարական պլանավորման նախարար Ավիգդոր Լիբերմանը, որ նաև «Իսրայելը մեր տունն է» կուսակցության ղեկավարն է, փոխվարչապետ, տրանսպորտի նախարար, գեներալ Շաուֆ Մոֆազը, տուրիզմի նախարար Իսհակ Արանովիչը: Հասարակական կազմակերպության ղեկավար է ընտրվել նախկինում Բաքվի բնակիչ, ներկայումս Իսրայելի Կնեսետի պատգամավոր Իոսիֆ Շագալը, որն «Իսրայելը մեր տունն է» կուսակցության անդամ է, հաճախ այցելում է Բաքու: Շագալը նաև առանցքային դեր է ստանձնել թուրք-ադրբեջանա-իսրայելական գաղթօջախների գործակցությունը խորացնելու գործընթացում, ներկա է գտնվել նախորդ տարվա հունիսին Անթալիայում աշխարհի թուրք-ադրբեջանական համայնքային միությունների համատեղ նիստին, որի ընթացքում հանդես է եկել նման եռակողմ գործակցությունը զարգացնելու կոչով: *«ԱզԻս»* կազմակերպության փոխնախագահներն են Նեխամիա Միխաելին, Ալեքս Շապիրոն և Նինա Յարովայան:

Նազիմ Իբրահիմովը նաև հանդիպել է Կնեսետի փոխնախագահ Ամնոն Կոենի և Ներգաղթի հարցերով նախարար Զեև Բոյմոմի հետ: Մեկնումից առաջ ադրբեջանցի պաշտոնյան հայտարարել էր, որ իրենց կառույցը պատրաստ է գործակցել ցանկացած պետության հրեական կազմակերպության հետ:

Ըստ առկա տվյալների՝ 1990-ից ի վեր Ադրբեջանից Իսրայել են փոխադրվել 80 հազար, ինչպես հրեա, այնպես էլ ռուս և ադրբեջանցի քաղաքացիներ: Հրեաների թիվը կազմել է մոտ 20 հազար: Նրանցից մոտ 10 հազարը բնակվում են Հայֆա քաղաքում: Նույն քաղաքում նրանք հիմնել են «Հայֆա-Բաքու» հասարակական կառույցը: Նաթանի քաղաքի նախկին ադրբեջանաբնակ քաղաքացիները հիմնել են «Ադրբեջան - Իսրայել» միությունը:

Ադրբեջանական «սփյուռքի» հարցերով պետական կոմիտեի Մերձավոր Արևելքի երկրների բաժնի ղեկավար Քյավուզ Քասիմովը հայտարարել է, որ նորաստեղծ կազմակերպությունն աշխատելու է իսրայելական Կնեսետի հետ և պետք է այնպես գործի, որ Կնեսետում քննարկվի Խոջալուի դեպքերի թեման: «Պետք է համոզել Իսրայելի կառավարությանը, որ դա նույնպես ցեղասպանություն էր, ինչպես և Հոլոքոստը»,- հայտարարել է նա: Կառույցը պետք է աշխատի նաև Թուրքիա-Իսրայել հարաբերությունների զարգացման համար, որտեղ, ազերի

գործչի բնորոշմամբ, վերջին շրջանում հետընթաց է նկատվում: Քասիմովի խոսքով՝ այս նպատակով Ադրբեջանը պետք է շահարկի նավթի գործոնը: Նշենք, որ Իսրայելը տարեկան ներկրում է 12 մլն տոննա նավթ, որից մոտ 2 մլն-ը՝ Ադրբեջանից: Այս ցուցանիշն աճման միտում ունի: Իսրայելի էներգետիկ շահերի համատեքստում էր նաև Բաքու-Ջեյհանի շինարարությունը, քանի որ Ջեյհանը Իսրայելի Հայֆա քաղաքից մոտ 600 կմ հեռավորության վրա է, Հայֆայի նավթամշակման գործարաններն օգտագործում են Ջեյհանում ստացվող ադրբեջանական նավթը: Ավելի վաղ Հայֆա ադրբեջանական նավթը հասնում էր հիմնականում Սուփսա քաղաքից, հեռավորությունը կազմում էր մոտ 2000 կմ:

Մայիսի 17-22-ը Պետական կոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովը այցով գտնվել է ԱՄՆ Նյու Յորք, Սան Ֆրանցիսկո, Լոս Անջելես քաղաքներում: Ըստ Բաքվի մամուլի՝ ԱՄՆ ադրբեջանական և թուրքական կառույցներից բացի, նաև հանդիպել է հրեական կառույցների անդամների հետ: Վերստին քննարկվել է համատեղ լոբբինգի կազմակերպման հարցը:

ԱՄՆ-ում պրոադրբեջանական լոբբինգի թեմայով Վաշինգտոնում գործող «Խորհրդային հրեաների ազգային խորհուրդ» կառույցի ղեկավար Մարկ Լևինը «Ջերուսալեմ փոստ» հանդեսին ասել է, թե «ԱՄՆ հայկական կառույցները շատ ուժեղ և կազմակերպված են, հանդես են գալիս միասնական ճակատով»: «Որոշ քաղաքական հարցերում մենք գործակցում ենք հայերի հետ, բայց երբ հերթը հասնում է Ադրբեջանին՝ մենք հակադիր կողմերում ենք»,- նշել է Լևինը: Նույն թեմայով «Ջերուսալեմ փոստին» տված հարցազրույցում Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը նշել է. «ԱՄՆ հրեաներն օգնել են Ադրբեջանին Վաշինգտոնում լոբբինգ կազմակերպելու հարցում, և այդ օգնությունը շատ կարևոր է»: Թերթը գրում է, որ դա, մասնավորապես, դրսևորվեց Կոնգրեսում՝ Ադրբեջանին ուղղակի ամերիկյան օգնությունը սահմանափակող հայտնի 907-րդ կետի կասեցման դեպքում: Այս առումով կարևոր են նաև ադրբեջանական մամուլում շրջանառվող տեղեկություններն այն մասին, թե իբր 1918թ. Ադրբեջանի ներկայիս Ղուբայի շրջանում հայկական ջոկատների կողմից զանգվածաբար սպանվել են տեղի հրեաներ: Ղուբայի շրջանում հայտնաբերվել են մարդկանց զանգվածային թաղման վայրեր: Ադրբեջանական իշխանությունները նախատեսում են այստեղ հիմնել «ցեղասպանության թանգարան»: Նշենք, որ առաջին դեպքը չէ, երբ հայկական կողմին ձգտում են մեղադրել հրեաներին զանգվածաբար ոչնչացնելու մեջ: Մեծ եղեռնի հարցում ժխտողական գիծ վարող պաշտոնական Անկարայի պատմաբանները նշում են «Օսմանյան շրջանում Թուրքիայի տարածքում հայերի կողմից 100 հազար հրեաների բնաջնջման մասին»: Միանշանակ է միտումը՝ նման մարտավարությամբ իրենց կողմը գրավել միջազգային և, մասնավորապես, ԱՄՆ հրեական կառույցները՝ այսպիսով խոչընդոտելով մասնավորապես Կոնգրեսում Եղեռնի օրինագծերի հնարավոր առաջընթացին: «100 հազար հրեաների հնարովի ցեղասպանության» թեմային ժամանակին անդրադարձել է պատմաբան Վահագն Դադրյանը: Մայիսի 14-ին Բաքվում Իսրայելի դեսպան Արթուր Լենքի կողմից կազմակերպվել է Ադրբեջանում աշխատող 11 պետությունների դեսպանատների ներկայացուցիչների այց Ղուբայի շրջան, մասնավորապես՝ «Կրասնայա Սլոբոդա» ավան, որտեղ բնակվում են մոտ 4 հազար լեռնցի հրեաներ: Տեղի հրեական համայնքի ղեկավար Բորիս Սիմանդուևը (ապրիլին մեկնել էր Իսրայել *«ԱզԻս»* կառույցի հիմնադրման արարողությանը) հայտարարել է, որ իրենք խտրականությունների հետ չեն բախվում, իսկ «իրենց անհանգստացնող խնդիրը Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտումն է»: Դեսպան Լենքն առավել խուսափողաբար նշել է, որ Ղուբայում հայտնաբերված եղբայրական գերեզմանի վերաբերյալ կարծիք կարող է հայտնել ուսումնասիրությունների ավարտից հետո:

Ադրբեջանի «Սահմանադրություն» հիմնադրամի տնօրեն Ալիահմեդ Նուրիևը հայտարարել է, որ նավթի դիմաց Ադրբեջանն Իսրայելից պետք է պահանջի օժանդակություն լոբբինգի հարցերում և հնարավորություն աշխատել նորագույն տեխնոլոգիաների հետ (այդ թվում նաև ռազմական), խորացնի գործընկերությունն անվտանգության ոլորտում: Ըստ մամուլի՝ մասնավորապես անվտանգության ասպարեզում հարաբերությունների որոշակի զարգացում

է սկսվել 1998թ. վարչապետ Բենյամին Նաթանյահուի Բաքու այցից հետո: Մեկ տարի անց Ադրբեջանում է գտնվել Իսրայելի ԱԳՆ պատվիրակությունը:

Ադրբեջան Իսրայել գործակցությունը զարգանում է նաև գյուղատնտեսության և առողջապահության ոլորտներում: Ադրբեջանում իրականացվում է իսրայելական «Մաշավ» բարեգործական ծրագիրը: Այն Իսրայելի ԱԳՆ վերահսկողությամբ իրականացվող ծրագիր է՝ ուղղված զարգացող պետությունների գյուղատնտեսության և առողջապահության զարգացմանը: Ծրագրի շրջանակում 2003թ. Իսրայելի բժիշկներն անհատույց 19 վիրահատություններ և խորհրդակցություններ են անցկացրել Ադրբեջանում, հատկացվել է $10 հազար տեխնիկական օժանդակություն: Կազմակերպվել է առողջապահության, գյուղատնտեսության և տնտեսության ոլորտի 30 մասնագետների վերապատրաստումն Իսրայելում:

Ըստ որոշ տվյալների՝ ադրբեջանա-իրանական սահմանի երկայնքով գտնվում են մի քանի իսրայելական գաղտնալսող կայաններ, որոնք գործածվում են Իրանի դեմ: Այս մասին նշված է ԱՄՆ «Վաշինգտոնի ինստիտուտի» Թուրքական հետազոտական ծրագրի աշխատակից, ազգությամբ թուրք Սյոներ Չաղափթայի մի հոդվածում: Ըստ թուրք վերլուծաբանի՝ կայանների վերաբերյալ ԻԻՀ-ում տեղյակ են, և թեման երկկողմ որոշակի լարվածության պատճառներից մեկն է: Բացի նշված թուրք վերլուծաբանի հոդվածից, այս թեմայով այլ հրապարակումներ առայժմ չեն հանդիպել:

Հայկարամ Նահապետյան

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Վերջին ժամանակներս Թուրքիայում զգալիորեն սրվել է քաղաքական իրավիճակը: Թուրքիան քաղաքական ճգնաժամ է ապրում, որն առաջացել է նախագահական ընտրությունների պատճառով: Թուրքիայի գործող նախագահի իրավասությունների ժամկետը լրացել է մայիսի 16-ին: Չնայած դրան՝ Սեզերը հայտարարել է, որ, Սահմանադրության 102-րդ հոդվածի համաձայն՝ կշարունակի կատարել պարտականությունները մինչև նոր նախագահի ընտրվելը: Վերջինս առաջին երկու փուլն անցնելու համար պետք է հավաքի խորհրդարանի ձայների առնվազն 2/3-ը՝ 367 ձայն: Երրորդ և չորրորդ փուլերը հաղթահարելու համար թեկնածուին անհրաժեշտ է ստանալ 276 պատգամավորական քվե:

Նախագահական պաշտոնին հավակնում էին իշխող կուսակցության երկու թեկնածու: Ի տարբերություն Ֆրանսիայի, ուր նախագահի թեկնածուները հայտնի էին ընտրություններից մի քանի ամիս առաջ, Թուրքիայում երկրի հնարավոր ղեկավարի անունը հայտնի դարձավ ընտրություններից ընդամենը երեք օր առաջ՝ ապրիլի 24-ին: Ի դեպ, նախագահի հավակնորդները պետք է իրենց փաստաթղթերը ներկայացնեին ապրիլի 25-ին: Նախագահի թեկնածուներն են Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) ներկայացուցիչներ, արտաքին գործերի նախարար Աբդուլահ Գյուլը և Անկարայի պատգամավոր Էրսոնմեզ Յարբայը: Վերջինս, սակայն, վերջին պահին հանեց թեկնածությունը՝ դրանով իսկ նախագահ ընտրող պատգամավորներին զրկելով ընտրության հնարավորությունից: Յարբայը խոստովանել է, որ թեկնածությունը դրել է՝ անսալով մյուս կուսակցությունների հորդորներին, որոնք դեռ չէին առաջադրել իրենց թեկնածուին: Եվ երբ պարզվեց, որ թեկնածուները երկուսն են, և երկուսն էլ ԱԶԿ-ից, Յարբայը հանեց թեկնածությունը: Փաստորեն, կարելի է ասել, որ Յարբայի թեկնածությունն առաջադրվել էր՝ ելնելով «քաղաքավարության կանոններից»:

Սկզբում նախատեսվում էր, որ Թուրքիայի վարչապետ Էրդողանը կդնի թեկնածությունը, սակայն նա առաջ քաշեց կրթությամբ տնտեսագետ, բնավորությամբ դիվանագետ, չափավոր իսլամիստ Գյուլի թեկնածությունը: Այս քայլը վկայում է Էրդողանի հեռատեսության մասին և համարվում է փոխզիջումային տարբերակ ԱԶԿ-ի համար, քանի որ Գյուլը նախագահի թիվ 1 թեկնածուն չէր: Էրդողանից բացի, նախագահական աթոռին հավակնում էր նաև Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) նախագահ Բյուլենթ Արինչը: Էրդողանը հասկանում էր, որ իր թեկնածությունն առաջադրելու դեպքում ուժեղ հակազդեցության կհանդիպի ընդդիմության կողմից: Դրա ապացույցն է Թուրքիայում ապրիլի 14-ին տեղի ունեցած ցույցը, որին մասնակցել է 370.000 մարդ (կարծիքներ կան, թե մասնակիցների թիվը հասել է 500.000-1.000.000-ի): Բացի այդ, Էրդողանին վախեցնում էր կուսակցության պառակտման հանգամանքը (ինչպես դա տեղի ունեցավ 2005թ. հոկտեմբերի 3-ին), ինչն էլ դրդեց նրան առաջ քաշել Գյուլի թեկնածությունը:

Նախագահական ընտրություններից առաջ ԹԱՄԺ-ը ուներ հետևյալ պատկերը. ԱԶԿ–353 մանդատ, Ժողովրդա-հանրապետական կուսակցություն (ԺՀԿ)–150, Հայրենիք կուսակցություն (ՀԿ)–20, Անկախ կուսակցականներ–11, թափուր տեղեր–7, Ճշմարիտ ուղի կուսակցություն (ՃՈՒԿ)–4, Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցություն (ՍԴԺԿ)–1, Երիտասարդական կուսակցություն (ԵԿ)–1, Ժողովրդի վսեմացման կուսակացություն (ԺՎԿ)-1: Այժմ ՀԿ-ն և ՃՈՒԿ-ը միավորվել են Դեմոկրատական կուսակցություն (ԴԿ) անվամբ: Նոր կուսակցության առաջնորդը դարձավ Մեհմեդ Աղարը: Այն, ինչ ժամանակին չհաջողվեց անել տվյալ կուսակցությունների նախկին առաջնորդներին՝ Մեսութ Յըլմազին և Թանսու Չիլերին, այժմ հաջողվեց դրանց նոր լիդերներին՝ Էրքան Մումջուին և Մեհմեդ Աղարին: Նույն կերպ փորձում էին վարվել ԺՀԿ ղեկավար Դենիզ Բայկալը և Դեմոկրատական ձախ կուսակցության (ԴՁԿ) ղեկավար Զեքի Սեզերը, սակայն նրանք անհաջողություն կրեցին:

Ընդդիմությունը սկզբնական շրջանում բոյկոտեց քվեարկությունը, սակայն հետո անսալով Էրդողանի՝ քաղաքացիական պարտականության մասին հորդորներին, ապրիլի 27-ին մասնակցեց քվեարկությանը՝ չնայած քվեարկության նախօրեին արդեն հայտնի էր, որ առաջին փուլը վերջինը չէ, քանի որ նստաշրջանին ներկա էր ընդամենը 361 պատգամավոր, մինչդեռ նվազագույնը պետք է լիներ 367: Ինչևէ, 361 պատգամավորից 357-ը քվեարկեց Գյուլի օգտին, 3-ը՝ Գյուլի դեմ, 1-ը՝ ձեռնպահ: Փաստորեն, Գյուլին նախագահ ընտրվելու համար չբավարարեց ընդամենը 10 քվե: Մայիսի 6-ին թուրքական պառլամենտը երկու անգամ փորձեց վերստին անցկացնել նախագահական ընտրությունները, սակայն մեջլիսում չապահովվեց քվորումը՝ նախագահական ընտրությունների առաջին փուլի վերաքվեարկում անցկացնելու համար (դա պետք է անցկացվեր, քանի որ որ երկրի Սահմանադրական դատարանը մայիսի 1-ին չեղյալ էր հայտարարել ապրիլի 27-ին կայացած նախագահական ընտրությունների առաջին փուլը): Երկու դեպքում էլ խորհրդարանում չապահովվեց պատգամավորների սահմանադրական մեծամասնության ներկայությունը. առաջին քվեարկմանը մասնակցել է 356, երկրորդին՝ 358 խորհրդարանական: Սահմանադրության համաձայն՝ քվորումի ապահովումը պարտադիր է, որպեսզի անցկացվեն ընտրությունների հետագա երեք փուլերը, որոնք նախատեսված էին մայիսի 9-ին, 12-ին և 15-ին:

Մայիսի 9-ին դրանք հետաձգեց խորհրդարանը, քանի որ նախագահական աթոռի միակ թեկնածու Աբդուլահ Գյուլը հանեց թեկնածությունը: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ մայիսի 6-ին չապահովվեց նախագահական ընտրությունների առաջին փուլի վերաքվեարկության քվորումը: Արդյունքում՝ Գյուլը երկու անգամ՝ ապրիլի 27-ին և մայիսի 6-ին, չկարողացավ հավաքել ձայների անհրաժեշտ մեծամասնությունը: Խորհրդարանը պետք է որոշում ընդուներ նախագահական ընտրությունների դադարեցման մասին և 48 ժամվա ընթացքում համապատասխան վճիռ հրապարակեր իր պաշտոնաթերթում: Այնուհետև Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) չեղյալ հայտարարեց նախկին ընտրությունները և հայտարարեց նորի անցկացման մասին:

Թուրքիայի Սահմանադրության համաձայն, եթե խորհրդարանը մեկ ամսվա ընթացքում (ապրիլի 16-ից մինչև մայիսի 16-ը) չի կարողանում ընտրել երկրի նախագահին, ապա նշանակվում են վաղաժամ խորհրդարանական ընտրություններ: Խորհրդարանը պետք է ցրվի մինչև հունիսի 10-ը: Թուրքական խորհրդարանը մայիսի 10-ին երկրորդ ընթերցմամբ հաստատեց Սահմանադրության փոփոխումը (առաջին ընթերցումը տեղի էր ունեցել մայիսի 8-ին), որով նախատեսվում էր երկրի նախագահի համաժողովրդական ընտրություն: Այս որոշման օգտին է քվեարկել 458 պատգամավոր, որոնք թուրքական մեջլիսում սահմանադրական մեծամասնություն են կազմում: Դեմ է քվեարկել 55 մարդ: Դրանից հետո նախագիծը պիտի ուղարկվի նախագահին, որպեսզի վերջինս հաստատի այն: Եթե Սեզերը հաստատի փոփոխված Սահմանադրությունը, ապա այսուհետ՝ սկսած Թուրքիայի 11-րդ նախագահից, նախագահները կընտրվեն ոչ թե պատգամավորների, այլ ժողովրդի կողմից «5+5» տարբերակով. 5 տարի ժամկետով՝ ևս մեկ անգամ նույն ժամկետով վերընտրվելու հնարավորությամբ: Գործող Սահմանադրությամբ նախագահը 4 փուլով ընտրվում է խորհրդարանի կողմից 7 տարի ժամկետով, իսկ մեջլիսի կազմը՝ հանրաքվեի միջոցով 5 տարին մեկ: Թուրքական խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ հավանություն տվեց նաև օրենսդիր ժողովի իրավասությունների կրճատմանը. ներկայիս 5 տարվա փոխարեն՝ 4 տարի: Բացի այդ, պատգամավորները կարող են ընտրվել սկսած 25 տարեկանից, մինչդեռ հին Սահմանադրությամբ այդ տարիքը սկսվում էր 30-ից: Ստացվում է, որ չնայած նախագահի լիազորությունները կրճատվում են երկու տարով, նոր Սահմանադրության համաձայն՝ նա իրավունք ունի երկրորդ անգամ միևնույն ժամկետով վերընտրվել, ինչը բացառվում էր հին Սահմանադրությամբ:

Սակայն Թուրքիայի գործող նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը հասկացրել է, որ այդ որոշման վրա վետո է դնելու՝ գտնելով, որ այժմ բարեփոխումներ անցկացնելու ժամանակը չէ: Եթե Սեզերը, որն աշխարհիկ ռեժիմի կողմնակից է, և որին աջակցում են բանակն ու ընդդիմությունը, վետո դնի դրա վրա, ապա համաժողովրդական նախագահական ընտրությունների հարցը կլուծվի համազգային հանրաքվեով, որը տեղի կունենա հուլիսի 22-ին՝ նոր խորհրդարանի վաղաժամ ընտրությունների հետ միաժամանակ: Ի դեպ, Սեզերը Թուրքիայի

առաջին նախագահն է, որը չի եղել ակտիվ քաղաքական գործիչ և բարձրաստիճան զինվորական: Նա եղել է Սահմանադրական դատարանի գլխավոր դատավորը: Ստացվում է, որ նախագահական ընտրությունների ճակատագիրը դե-յուրե գտնվում է Սեզերի, դե-ֆակտո՝ բանակի ձեռքում:

ԱԶԿ-ն չկարողացավ հասնել նրան, որ հուլիսի 22-ը նշանակվի նախագահական ու խորհրդարանական ընտրությունների օր: ԱԶԿ-ն առաջարկում էր վաղաժամ ընտրություններն անցկացնել հունիսի 24-ին: Օրենքով դրանք պետք է անցկացվեն նոյեմբերի 4-ին: Սակայն ԿԸՀ ղեկավար Մուհամմեր Այդընը հայտարարեց, որ տեխնիկական պատճառներով անհնար է դրանց անցկացումը վերոնշյալ ժամկետում: Մինչև մայիսի 20-ը քաղաքական կուսակցությունները պետք է համապատասխան դիմում ուղղեն ԿԸՀ-ին: Վերջինս քվեաթերթիկները կհաստատի մայիսի 27-ին, իսկ հաջորդ օրը կհաստատվի ընտրատեղամասերի ցուցակը: Քաղաքական կուսակցությունների թեկնածուների առաջադրման ժամկետը լրանում է հունիսի 20-ին, իսկ նախընտրական քարոզչությանը՝ հուլիսի 21-ին:

Թե՛ նախագահական ընտրությունների առաջին փուլի, թե՛ դրա վերաքվեարկման բոյկոտը ընդդիմության կողմից պայմանավորված է նրանով, որ Գյուլը չի թաքցնում իր ցանկությունները՝ Թուրքիան վերադարձնել իսլամական ավանդույթներին: Նա հայտարարել է, որ եթե ինքը դառնա նախագահ, ապա կհրաժարվի պետության ղեկավարման բացառապես աշխարհիկ սկզբունքներից: Այսօր նա «վայելում» է այդ հայտարարության պտուղները:

ԱԶԿ առաջնորդները, հավանաբար, հույսը դրել էին քվեարկության երրորդ փուլի վրա, ուր անհրաժեշտ էր ստանալ քվեների սովորական մեծամասնությունը: Սա էլ նրանց գլխավոր ռազմավարական սխալն էր: Ընդդիմությունը ոչ միայն ընտրությունների առաջին փուլում հրաժարվեց քվեարկել Գյուլի օգտին, այլև կազմակերպված ձևով ընտրության օրը ներկա չգտնվեց խորհրդարանում: Արդյունքում՝ Գյուլի հակառակորդներն ընդդիմության ղեկավար Դենիզ Բայքալի ղեկավարությամբ հարմար առիթ ստացան Սահմանադրական դատարան դիմելու համար, ինչն էլ անհապաղ արեցին: Այդ քայլն ընդդիմությանը նոր խորհրդարանում մեծամասնություն կազմելու հնարավորություն կընձեռի: Իրենց հերթին իսլամիստները կարծում են, որ եթե նախագահին ընտրի ժողովուրդը, ապա այդ դեպքում իրենց թեկնածուի հաղթանակը երաշխավորված կլինի: Գյուլն անձամբ վստահ է, որ եթե նախագահն ընտրվի ողջ ժողովրդի կողմից, ապա ինքը ամենաքիչը կստանա ձայների 70%-ը: Թուրքիայում խոսակցություններ են գնում քվորումի սկզբունքի փոփոխման վերաբերյալ. 2/3-ից (367 քվե) 50%+1-ի (276 քվե):

Պետական ռեֆորմների նախագիծը խորհրդարանի քննարկմանը դրվեց այն բանից հետո, երբ Թուրքիայում նախագահական ընտրությունները փակուղի մտան: Ռեֆորմներ անցկացնելու նախագիծը պատկանում է ԱԶԿ-ին, ինչը կարելի է որակել որպես քաղաքական շանտաժ: Սա ԱԶԿ տակտիկական քայլ է, որի նպատակն աշխարհիկ ընդդիմության հնազանդեցումն է: ԱԶԿ-ում գիտակցում են, որ խորհրդարանի վաղաժամ ընտրություններում և նախագահի թեկնածուների համաժողովրդական քվեարկությունում ամենայն հավանականությամբ կհաղթեն իսլամականացման կողմնակիցները: Դա բացատրվում է նրանով, որ եվրոպականացման ու աշխարհիկ ռեժիմի պահպանման օգտին են հանդես գալիս հիմնականում Ստամբուլում և Անկարայում:

Թուրքիայի աշխարհիկ ռեժիմի կողմնակիցները երկյուղներ ունեն, թե Գյուլը կվարի իսլամիստական քաղաքականություն: Ընդդիմությունը ձգտում է նոր դաշինք ձևավորել, որպեսզի խորհրդարանում թուլացնի ԱԶԿ դիրքերը և թույլ չտա իշխող կուսակցությանը Թուրքիայի վզին փաթաթել սեփական նախագահին: Ի պատասխան՝ ԱԶԿ-ն ցանկանում է բարեփոխման ենթարկել ողջ ընտրական համակարգը: Միաժամանակ, ԱԶԿ-ն հավաստիացնում է, որ մտադիր չէ իսլամիստական քաղաքականություն վարել նույնիսկ այն դեպքում, երբ նրա ներկայացուցիչները միաժամանակ կզբաղեցնեն նախագահի և վարչապետի պաշտոնները: ԱԶԿ ձգտումը հասկանալի է. հասարակական հարցումները ցույց են տալիս, որ ԱԶԿ-ին աջակցում է ընտրողների 41.3%-ը: Դա 7%-ով ավելին է, քան նրանք ստացան 2002թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Վերջերս նրանց մեծ չափով աջակցում է երիտասարդությունը: Նոր սխեման իսլամիստներին հնարավորություն կտա ոչ միայն զգա-

լիորեն բարելավել սեփական ներկայացուցչությունը խորհրդարանում, այլև սեփական թեկնածուին դնել պետական բարձրագույն պաշտոնում: ԱԶԿ-ն առաջարկում է առաջին համաժողովրդական ընտրություններն անցկացնել վաղաժամ խորհրդարանական ընտրությունների հետ միևնույն օրը: Թեկնածուն նորից կդառնա Աբդուլահ Գյուլը: Եթե նա ընտրվի նախագահ, ապա, բնականաբար, կծագի նոր արտգործնախարար ընտրելու հարցը: Փորձագետների կանխատեսումներով՝ արտգործնախարար կդառնա ներկայիս ֆինանսների նախարար Ալի Բաբաքանը: Սակայն ամենևին էլ բացառված չէ, որ ԱԶԿ-ն նախագահի նոր թեկնածու առաջադրի, որն, անշուշտ, իր հայտարարություններում առավել զուսպ կլինի՝ հաշվի առնելով իր նախորդի նախադեպը:

ԱԶԿ-ն հավաստիացնում է, որ իրենց առաջադրած սահմանդրական բարեփոխումը Թուրքիան կդարձնի ավելի դեմոկրատական: ԱԶԿ-ն իրեն համարում է երկրի միակ դեմոկրատական կուսակցություն: Տարօրինակն այն է, որ ԱԶԿ-ն իշխանության է եկել դեմոկրատական ճանապարհով և իր իշխանության տարիներին իրականացրել է եվրոպական չափորոշիչներին համապատասխան ավելի շատ բարեփոխումներ, քան նախորդ բոլոր կառավարությունները: ԱԶԿ հեղինակությունը բարձր է. այն «աչքի չի ընկել» կոռուպցիոն սկանդալներով, հասել է տնտեսական ոչ վատ աճի տեմպերի (վերջին 4 տարիների ընթացքում Թուրքիայի տնտեսությունը 33%-ի աճ է արձանագրել): ԱԶԿ-ն ժխտում է, որ ունի իսլամական քաղաքական ուղղվածություն և հավաստիացնում է, որ հաշվի է առնում թուրքական ազգային առանձնահատկությունները: Սակայն դա իրականում այդպես չէ: Դեռևս 1999թ. ԱԶԿ ներկայիս առաջնորդ Էրդողանն իր իսլամիստական հայացքների համար բանտ էր ընկել: Ընդդիմությունը նույնպես չի հավատում նրան: Էրդողանի կառավարության գործունեությունը նույնպես դա չի հաստատում: Էրդողանը չի հրաժարվել իր իսլամիստական ծրագրերից, պարզապես սպասում է, թե երբ Թուրքիայում բավարար չափով կխարխլվեն աշխարհիկ ինստիտուտների հիմքերը: Նա ցանկանում է Թուրքիան դարձնել Իրան կամ Սաուդյան Արաբիա:

Էրդողանը երկրում ստեղծված քաղաքական ճգնաժամը համեմատել է երկրաշարժի հետ՝ մեկնաբանելով թուրքական զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ Յաշար Բույուքանըթի կոշտ հայտարարությունը: Զինված ուժերը համարվում են աշխարհիկ ռեժիմի գլխավոր պաշտպանները, ուստի զինվորականները պատրաստ են ակտիվորեն հակազդել երկրի իսլամականացմանը: Վերջին տարիներին Էրդողանի կառավարության ջանքերով թուրք զինվորականների ազդեցությունը որոշակիորեն նվազել է: Ազգային անվտանգության խորհրդում (ԱԱԽ) ընդգրկվել են ավելի շատ քաղաքացիական անձինք: Այժմ կառավարությունը կարող է վերահսկել ռազմական ծախսերը: 2006թ. սկսած՝ ռազմական դատարաններն իրավունք չունեն դատել քաղաքացիական անձանց: Չնայած դրան՝ Գլխավոր շտաբը, որն ավանդաբար քաղաքական մեծ կշիռ ունի, ապրիլի 27-ի գիշերը հանդես եկավ մի հայտարարությամբ, որով իսլամական շրջանակների քաղաքական հավակնությունները դիտարկում էր որպես սպառնալիք հանրապետության աշխարհիկ սահմանադրական սկզբունքներին: Վերջին 50 տարիների ընթացքում Գլխավոր շտաբը 3 անգամ (1960, 1971, 1980) տապալել է գործող կառավարություններին: Բացի այդ, 1997թ. զինվորականների ճնշման հետևանքով հեռացվեց կառավարության ղեկավար, իսլամիստների առաջնորդ Նեջմեթթին Էրբաքանը: Գլխավոր շտաբի հայտարարությանը հետևեց Եվրամիության ընդլայնման հարցերով կոմիսար Օլլի Ռեհնի հայտարարությունը, ուր կոչ էր արվում Գլխավոր շտաբին՝ չխառնվել նախագահական ընտրություններին: Իսկ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Քերի Դնիսը հայտարարեց, որ զինված ուժերը պետք է մնան զորանոցներում և չմիջամտեն քաղաքականությանը:

Տեղի ունեցող գործընթացներին ի՞նչ չափով կխառնվի թուրքական բանակը: Սա այն դեպքն է, երբ թուրքական բանակը շատ տարիների ընթացքում առաջին անգամ զանգվածային աջակցություն ստացավ, ինչն արտահայտվեց ապրիլի 14-ին Ստամբուլում տեղի ունեցած՝ Թուրքիայի ողջ պատմության մեջ ամենազորեղ ցույցով (զինվորականների հաշվարկներով՝ դրան մասնակցել է 2.100.000 մարդ), որը կազմակերպել էին 600 հասարակական կազմակերպություններ: Ցուցարարները հիմնականում հանդես էին գալիս «Թուրքիան եղել և մնալու է աշխարհիկ», «Նախագահական նստավայրը փակ է շարիաթի համար», «Ո՛չ հեղա-

շրջմանը», «Իմամը չի կարող դառնալ նախագահ» կարգախոսներով և ծածանում էին 4կմ երկարությամբ ազգային դրոշը: Թուրքական ընտրանին ունեցել է եվրոպականացված շերտեր, որոնք ակտիվորեն աջակցել են բանակին, սակայն դա երբեք հրապարակավ չեն արել: Այժմ նրանք, իհարկե, ուղղակիորեն կոչ չեն անում ռազմական հեղաշրջում անել, սակայն բանակն ակնհայտորեն դրդում են կոշտ դիրքորոշման: Այն, որ Գյուլը կարծես թե նահանջեց, քեմալականների մարտավարական հաղթանակն էր: Իսկ ո՞րն է դրա այլընտրանքը: Այլընտրանքն ուղղակի նախագահական ընտրություններն են: Ստեղծված ճգնաժամից դուրս գալու համար կար երկու տարբերակ. առաջինը վաղաժամ ընտրություններն են, երկրորդը՝ ռազմական հեղաշրջումը: Նախագահական ուղղակի ընտրություններում իսլամիստների դիրքերը շատ ավելի ուժեղ կլինեն, քան ներկա համակարգի պարագայում: Իրականում, իսլամիստները հնարավորություն ունեն ամրապնդելու իրենց իշխանությունը: Իսկ ահա ռազմական հեղաշրջման միջոցով ողջ ժողովրդի կողմից ընտրված նախագահին տապալելը շատ ավելի դժվար կլինի, քան, ասենք, խորհրդարանական մեծամասնության կողմից ընտրված նախագահի պարագայում: Եվ ընդհանրապես, նախագահին ուժով տապալելը մի բան է, խորհրդարան ցրելը և նոր ընտրություններ նշանակելը՝ մեկ այլ: Դրանք տարբեր են նույնիսկ Ուկրաինայում, էլ չենք խոսում Թուրքիայի մասին: Ուստի կարելի է հասկանալ արևմտյան, և հատկապես ամերիկյան գործիչներին, որոնք ցանկանում են Թուրքիան ներքաշել Եվրոպա, քանի որ դրանում են տեսնում Թուրքիայի հետագա իսլամականացումը կանխելու միակ ուղին:

Ամենայն հավանականությամբ արտգործնախարարին մոտ ժամանակներս չի հաջողվի զբաղեցնել ավելի բարձր պաշտոն, և Թուրքիայի իսլամականացման որոշումը չի կայացվի: Դա պայմանավորված է նրանով, որ Եվրոպան չի կարող անտարբեր մնալ և դա թույլ չի տա: Գերմանիայի արտգործնախարար *Ֆրանկ Վալտեր Շտայնմայերը,* սակայն, մայիսի 3-ին իր աջակցությունը հայտնեց Գյուլին: Եվրոպայի մի մասը չի ցանկանում Թուրքիայի իսլամականացումը: Այս խնդիրը խիստ արդիական է, քանի որ դրված է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցը: Թուրքիան պետք է գիտակցի, որ երկրի իսլամականացումը խոչընդոտներ է ստեղծում ԵՄ-ին անդամակցելու համար: Եվրահանձնաժողովը զգուշացրել է Թուրքիային, որ ԵՄ-ին անդամակցելու նրա շանսերը կնվազեն, եթե երկրում չերաշխավորվի քաղաքացիական ազատությունների պաշտպանությունը: Թուրքիայում անցկացված սոցհարցումները ցույց են տալիս, որ 2006թ. ԵՄ-ին անդամակցելու կողմնակից էր բնակչության 32%-ը (2005թ.՝ 52%): Դա վկայում է այն մասին, որ թուրքերի շրջանում նվազում է Արևմուտքի կողմնակիցների թվաքանակը՝ պայմանավորված, որ վերջիններս կարծում են, թե քրիստոնյաները միավորվել են ընդդեմ մահմեդականների:

Հայաստանի համար շահավետ կլիներ, եթե Թուրքիան կատարեր ԵՄ բոլոր պայմանները: Դա կնշանակեր Թուրքիայի և Հայաստանի բաց սահման, Թուրքիայում հայկական փոքրամասնության և նրրանց ունեցվածքի պաշտպանության բարելավում: Թուրք մտավորականությունը կկարողանար բացեիբաց խոսել Ցեղասպանության մասին, իսկ ԵՄ սահմանները կմոտենային Հայաստանին: Ներկայումս Թուրքիայում չկա որևէ կուսակցություն և քաղաքական գործիչ, որ ճանաչի Օսմանյան Թուրքիայի իրագործած Հայոց ցեղասպանության փաստը: Դրա համար էլ նոր նախագահից կամ խորհրդարանից այս հարցում արմատական փոփոխություններ ակնկալել պետք չէ: Ինչ վերաբերում է Հայաստանի նկատմամբ վարած քաղաքականությանը, ապա Հայաստանի համար ավելի ձեռնտու կլինի պանիսլամիստների և ոչ թե պանթյուրքիստների իշխանության գալը: Ի տարբերություն պանթյուրքիստների, իսլամիստները, որոնք կրոնական խնդիրներին շատ ավելի մեծ տեղ են հատկացնում, բնականաբար, կաջակցեն սուննիներին: Ադրբեջանը շիական պետություն է, իսկ դա նշանակում է, որ պանթյուրքիստներն առավել սերտ կհամագործակցեն նրա հետ, քան պանիսլամիստները: Բացի այդ, արմատական իսլամիստների իշխանության գալով Արևմուտքն ու Թուրքիան միմյանցից կհեռանան: Կվատթարանան Անկարայի ու Եվրոպայի հարաբերությունները: Փաստորեն, Հայաստանի հանդեպ Թուրքիայի քաղաքականությունում կտրուկ փոփոխություններ չեն լինի: Սակայն բացառված չէ, որ նոր քաղաքական ուժն իր հետ նոր հայացքներ բերի, այդ թվում նաև՝ հայ-թուրքական հարաբերությունների կտրվածքով:

Այսպիսով, նախագահական ընտրությունների շուրջ առաջացած կոնֆլիկտը բնութագրվում է որպես կրոնի ու պետության, պանիսլամիստների ու պանթյուրքիստների վեճ: Բանակը միջամտում է այդ վեճին՝ հանդես գալով որպես «թուրք ժողովրդի հայր» Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի գաղափարների երաշխավոր: Նրա հռչակած վեց սկզբունքներից մեկը լաիցիզմի գաղափարն է, որը նախատեսում է իսլամի անջատումն աշխարհիկ իշխանությունից, սահմանափակում է կրոնի դերը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Այլ կերպ ասած՝ Թուրքիայում, որի բնակչության 99%-ը մահմեդական է, ներկայիս ճգնաժամն առաջացել է Աթաթուրքի ու Մուհամեդի կողմնակիցների բախման պատճառով: Մի կողմից՝ հանդես են գալիս նախագահը, բանակը, հիմնական արհմիութենական ու հասարակական կազմակերպությունները, 70-ից ավելի համալսարանների ռեկտորներ, գլխավոր ընդդիմադիր ուժերը, գործարար շրջանների հայտնի ղեկավարներ, իսկ մյուս կողմից՝ իշխող իսլամամետ ԱԶԿ-ն: Աշխարհիկ ռեժիմի կողմնակիցների կողմից ապրիլին կազմակերպված ցույցին մասնակցած մարդկանց թիվը կարելի է համեմատել իսլամիստների կողմից 2006թ. դեկտեմբերին կազմակերպված ցույցի մասնակիցների թվաքանակի հետ: Այդ ժամանակ Թուրքիա այցելեց Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդը: Դա վկայում է այն մասին, որ հարևան երկրում մեծ թիվ են կազմում թե՛ եվրոպական տիպի աշխարհիկ պետության կողմնակիցները, թե՛ արմատական իսլամի երկրպագուները: Ուստի բացառված չէ նաև քաղաքացիական պատերազմի հնարավորությունը:

Հայկ Գաբրիելյան

ГОНКА ПРОТИВОРАКЕТНЫХ ВООРУЖЕНИЙ

Планы Вашингтона по размещению систем ПРО в Европе постепенно приводят к сильной конфронтации с Россией, которая готовится к ответным действиям – как симметричным, так и асимметричным. Официальная Москва уже не раз заявляла, что пойдет на усиление своих позиций в области ПРО, а также неоднократно грозила выходом из договора по ракетам средней дальности.

В рамках ОДКБ Россия уже строит свою объединенную систему ПВО вместе с Беларусью, Арменией и странами Средней Азии. Уже ясно, что система ПВО будет оснащаться системами, способными осуществлять задачи, присущие противоракетной обороне.

Однако Москва не останавливается лишь на адекватных ответах, ясно, что эскалация конфронтации с Вашингтоном продолжается. Уже можно констатировать, что традиционная система международного баланса вооружений окончательно разрушается.

Так, 27 апреля Владимир Путин после встречи с президентом Чехии Вацлавом Клаусом заявил: «Нас не может не беспокоить, что происходит в Европе с вооружением. Мы делаем все, чтобы исполнять все свои обязательства. Мы сокращаем вооружение, и в европейской части России не осталось вообще никаких тяжелых вооружений. В то же время мы знаем о планах НАТО разместить в Болгарии и Румынии две базы по 5 тысяч человек и построить два позиционных района противоракетной обороны в Чехии и Польше. Получается, что Россия разоружается в одностороннем порядке, а наши партнеры заполняют европейское пространство новыми вооружениями». Более того, Путин выразил беспокойство в связи с тем, что «впервые в истории на европейском континенте появляется американская система ядерного стратегического комплекса».

Москва четко дает понять, что ни Иран, ни Северная Корея не обладают теми средствами, против которых предполагается использовать ПРО в Европе. По словам Путина, размещение американской системы ПРО в Чехии и Польше можно сравнить с размещением в Западной Европе во время Холодной войны ядерных ракет средней дальности «Першинг-2», которые были нацелены на СССР.

Во время презентации книги «Вооруженные Силы Российской Федерации 2006» начальник Генерального штаба ВС РФ генерал армии Юрий Балуевский высказался довольно жестко по этой тематике: «Мы просто обязаны сегодня не допустить того, от чего ушли 15 лет назад. Если скатимся вновь к обвинениям друг друга, к поискам виртуальных врагов, то это, не побоюсь сказать, отбросит лет на 50 назад не только отношения России и США. Мы только начали уходить от взаимной подозрительности. И вновь возвращаться к этому? Поэтому и строим наши отношения на простом, понятном принципе: мы в России (военные, политики, большинство нашего населения) не хотим новых «берлинских стен». А вот если пойти на то, что нам предлагают, то не гарантирую, что в Европе не появятся новые разделительные стены в отношениях. Мы, повторю, этого не хотим. Поэтому, прежде чем пугать Европу различного вида угрозами, давайте оценим: насколько они реальны. В свое время нас уже пугали, скажем, ядерным и химическим оружием Ирака. И что? Такового не оказалось. Зато сегодня в Ираке демократия – с известными последствиями. Долго велись переговоры и с Северной Кореей, но результат есть. А что мешает продолжить переговорный процесс с Ираном? Я убежден: у Ирана есть желание торговать с Европой, а не нападать на нее. И когда мы сегодня говорим о ядерной программе Ирана, то нельзя забывать, что есть различные механизмы контроля над ней, в том числе МАГАТЭ. Словом, надо разговаривать и пытаться понять друг друга. Диалог можно и нужно вести. Лишь тогда не вернемся к тому от чего, повторю, ушли 15 лет назад».

Путин уже идет на открытую конфронтацию с Белым домом. Большой резонанс вызвала речь президента России на праздничном параде 9 мая, когда он фактически сравнил Буша с Гитлером, найдя в его политике «те же претензии на мировую исключительность и диктат».

В то же время из Москвы звучат заявления о том, что Россия может фактически выйти не только из договора по ракетам средней дальности, но и из договора по ограничению по обычным вооружениям, что приведет к тотальному пересмотру устоявшегося баланса сил между крупнейшими державами.

Визит госсекретаря Кондолизы Райс в Москву в середине мая, похоже, никак не смягчил ситуацию. Встречи с Владимиром Путиным и главой российского внешнеполитического ведомства С.Лавровым хоть и проходили весьма политкорректно, однако ни по одному щекотливому вопросу стороны так и не пришли к общему знаменателю. Свои московские встречи госсекретарь охарактеризовала двояко. С одной стороны заявила, что никакой Холодной войны нет: «Я знаю, люди говорят об этом, бросаются фразами вроде «новая холодная война». Как человек, вышедший из этого периода, и как специалист, я думаю, что для таких параллелей, честно говоря, нет оснований»

Однако по вопросу ПРО позиции сторон не только не изменились в лучшую сторону, но и, похоже, ужесточились. После встречи с Путиным Райс заявила: «Соединенным Штатам надо прогрессировать, используя технологии для защиты государства, и мы собираемся это делать. Не думаю, что кто-либо ожидает, что США позволят наложить вето на интересы безопасности Америки».

А американцы идут вперед в плане развития сети ПРО, уже не делая ставку только на собственные ресурсы. Палата представителей Конгресса США в пятницу одобрила законопроект, предусматривающий выделение $205 млн на совместную американо-израильскую систему противоракетной обороны. Эта часть системы ПРО будет размещена на территории Израиля. Естественно, речь идет о предотвращении угрозы со стороны Ирана. Однако в долгосрочном плане США и Израиль смогут держать под зонтиком ПРО в целом регион, в котором рано или поздно появятся и другие угрозы для американской гегемонии.

Создается впечатление, что обеим сторонам сейчас выгоден обвал статус-кво мирового баланса. И Вашингтон, и Москва сейчас активно взялись за геополитический передел мира. Фактически, несмотря на внешнее противостояние по вопросу ПРО, конфликтующие стороны развязывают друг другу руки в вопросе начала нового имперского соперничества.

«Трудно уйти от вывода о том, что сверхзадача внешней политики администрации США – это консервация, запасание впрок единоличного лидерства в мировых делах», – такими словами охарактеризовал современную политику Белого дома глава МИД России Сергей Лавров. В тоже время Москва надеется на то, чтобы максимально отрезать от американского пирога в имперском порыве восстановления российской сверхдержавы. Исторический опыт показывает, что опасен не монополярный мир, который крайне нестабилен и принципиально неспособен на долгое и стабильное существование, особенно в современном, быстроразвивающемся мире. На сегодня наиболее опасной для мира является тенденция к поляризациям, к созданию противостоящих полюсов, которые в своей конфронтации лишь подпитывают друг друга.

Самвел Мартиросян

ՌԴ ՆԱԽԱԳԱՀ Վ.ՊՈՒՏԻՆԻ ԱՅՑԸ ՂԱԶԱԽՍՏԱՆ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ

Նոր վերադասավորումներ տարածաշրջանի էներգետիկ քարտեզի վրա

Մայիսի 10-12-ը ՌԴ նախագահ Վ.Պուտինի Ղազախստան և Թուրքմենստան կատարած այցերի արդյունքում ձեռք բերվեցին մի շարք կարևոր պայմանավորվածություններ, որոնք հիմնականում առնչվում են էներգետիկ ոլորտում պետությունների միջև համագործակցության զարգացմանը: Ձեռք բերված պայմանավորվածություններն ունեն նաև կարևոր քաղաքական նշանակություն:

Հատուկ ընտրված պահ այցելության համար

Վերջին մեկ տարվա ընթացքում բավական հետաքրքրական համընկնումներ են տեղի ունենում նախկին ԽՍՀՄ տարածքում էներգետիկ նշանակության ծրագրերի իրականացման ոլորտում: Այսպես, օրինակ, Իրան-Հայաստան գազամուղի բացումը համընկավ Բաքու-Էրզրում գազատարի փաստացի բացման հետ: Բացի նրանից, որ այս երկու գազատարները կարևոր նշանակություն ունեն Հարավային Կովկասի էներգետիկ անվտանգության ապահովման տեսանկյունից, դրանք հանդիսանում են տարբեր աշխարհաքաղաքական և տարածաշրջանային նշանակություն և նպատակաուղղվածություն ունեցող ծրագրեր: Նույն կերպ ՌԴ նախագահի այցը Ղազախստան և կարևոր ռուս-ղազախական և ռուս-թուրքմենա-ղազախական համաձայնագրերի ստորագրումը համընկան Լեհաստանի Կրակով քաղաքում հրավիրված ոչ ֆորմալ էներգետիկ գագաթաժողովի աշխատանքների հետ, որի վեց մասնակիցներն էին, ավելի ճիշտ՝ մասնակիցները պետք է լինեին, Լեհաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Վրաստանի և Լիտվայի նախագահները: Ինչպես կարելի է ենթադրել գագաթաժողովի մասնակից պետությունների զուտ աշխարհագրությունից, քննարկվող հիմնական հարցերից մեկը Ռուսաստանը շրջանցող Կենտրոնական Ասիա-Հարավային Կովկաս-Ուկրաինա-Արևելյան Եվրոպա էներգետիկ նախագծերի իրագործումն էր, որոնց կարևորագույն բաղկացուցիչը պետք է լինի նավթագազային ռեսուրսներով ամենահարուստ Ղազախստանը: Ռուսաստանի նախագահի այցը խափանեց Ն.Նազարբաևի մասնակցությունը նշված գագաթաժողովի աշխատանքներին, իսկ ստորագրված համաձայնագրերը, փաստորեն, ցույց տվեցին Կրակովյան և այլ նման հանդիպումների անարդյունավետությունը, քանի որ որպես Կենտրոնական Ասիայի գազի արտահանման ուղի վերահաստատվեց Ռուսաստանի տարածքը: Այս տեսանկյունից հատկանշական է, որ ՌԴ նախագահի Կենտրոնական Ասիա կատարած այցին նվիրված հոդվածներից մեկը ռուսական հեղինակավոր «Էքսպերտ» հանդեսում լույս տեսավ «***Путин не пустил Назарбаева в Польшу***» վերնագրով:

Հատկանշական է, որ Վ.Պուտինի այցը Աստանա կարելի է անվանել անսպասելի, քանի որ դեռ մայիսի սկզբին Ղազախստանի նախագահը հայտարարել էր, թե ինքն անպայման մասնակցելու է Կրակովյան գագաթաժողովին: Կարելի է ենթադրել, որ ռուս-թուրքմենա-ղազախական համաձայնագրերի ստորագրումը նույնպես վերջին շրջանի պայմանավորվածությունների արդյունք են, և այդ իսկ պատճառով դրանք անակնկալ են մատուցել, այսպես կոչված, Տրանսկասպյան գազամուղի կառուցման կողմնակիցներին և քաղաքական հովանավոր ԱՄՆ-ին: Այսպիսի հնարավորության մասին է խոսում, մասնավորապես, ԱՄՆ նախագահ Ջ.Բուշի չնախատեսված զանգը Աստանայում գտնով ՌԴ նախագահին՝ վերջինիս հետ երկկողմ հարաբերությունների զարգացման հարցերի քննարկման նպատակով: ՌԴ և ԱՄՆ նախագահների մամլո ծառայությունները սուղ տեղեկատվություն են հրապարակել խոսակցության թեմայի մասին: Մինչդեռ նույն հեղինակավոր «Էքսպերտ» ամսագրի կողմից հիմնված *«Ռուսկի Ռեպորտյոր»* ամսագրի առաջին համարում բավական հետաքրքիր մեջբերումներ են արված ինտերնետային մատյաններում (բլոգերում) խոսակցության հնարավոր թե-

մայի մեկնաբանություններից: Նշենք, որ վերջին տարիների ընթացքում բլոգերը բավական հաջող օգտագործվում են հատուկ հղումներ կատարելու համար ոչ պաշտոնական բնույթի տեղեկատվությանը, ինչը թույլ է տալիս կառավարություններին և լրատվամիջոցներին խուսափել նման տեղեկատվությունը ծանրակշիռ աղբյուրներով հավաստելուց և, համապատասխանաբար, հրատարակված նյութերի համար պատասխանատվությունից: Եվ այսպես, *«Ռուսկի Ռեպորտյորը»* մեջբերում է անում մի մատյանից, որտեղ ասվում է, որ Ջ.Բուշի զանգի հիմնական նպատակն է եղել համոզել ՌԴ նախագահին խուսափել Թուրքմենստանից դեպի Ղազախստան և ապա Ռուսաստան նոր գազատարի կառուցման մասին հռչակագրի ստորագրումից, մինչ այս հարցի քննարկումը ԱՄՆ-ՌԴ ձևաչափում, այդ թվում ԱՄՆ Պետքարտուղար Ք.Ռայսի Մոսկվա կատարած այցի շրջանակներում: Տվյալ մատյանից կատարված հաջորդ հղումը վերաբերում է նրան, որ նոր համաձայնագրերի ստորագրումը Աստանայում և Աշգաբադում Ռուսաստանի միայն առաջին հաղթանակն է, քանի որ դրանք վերաբերում են միայն գազի ոլորտին: Կենտրոնական Ասիայի նավթի արտահանման հեռանկարների առումով Ռուսաստանը դեռ շատ անելիք ունի, քանի որ Աքթաու-Բաքու նավթատարի կառուցման մասին ղազախա-ադրբեջանա-ամերիկյան պայմանավորվածությունները դեռևս ուժի մեջ են, չնայած Ղազախստանը կարող է միանալ Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթատարի շահագործողներին:

Նշենք, որ Վ.Պուտինի այցելությունը տեղի ունեցավ ՌԴ-ԵՄ գագաթաժողովի նախօրեին, ինչը բավական լուրջ ազդեցություն թողեց ԵՄ՝ Կենտրոնական Ասիայի գազային պաշարներն առանց Ռուսաստանի միջնորդության ներկրման ակնկալիքների վրա:

Պայմանավորվածությունների մասին

Եվ այսպես, ՌԴ նախագահ Վ.Պուտինի Կենտրոնական Ասիա կատարած այցելության ընթացքում ձեռք բերվեցին մի շարք կարևոր պայմանավորվածություններ: Դրանք են.

- Մայիսի 11-ին Ռուսաստանի, Ղազախստանի և Թուրքմենստանի նախագահները ստորագրեցին հռչակագիր Մերձկասպյան գազատարի կառուցման մասին: Նախագահները հանձնարարեցին իրենց կառավարություններին մինչև սեպտեմբեր պատրաստել և ստորագրել վերջնական համաձայնագիր գազատարի կառուցման պայմանների և ընթացքի մասին: Նոր խողովակաշարը պետք է Թուրքմենստանի Կասպիցի ափով ձգվի մինչ Ղազախստան և Ալեքսանդրով Գայ կոչված վայրում միանա Միջին Ասիա-Կենտրոն գազատարին, որը ձգվում է Ուզբեկստանից մինչև Ռուսաստան:
- Արդեն իսկ Ուզբեկստանի նախագահի ստորագրությամբ ամրագրված երկրորդ հռչակագրի համաձայն՝ ընթացիկ տարում պետք է սկսվի 1967-ին կառուցված Միջին Ասիա-Կենտրոն գործող գազատարի արդիականացման ծրագիրը: Ըստ որոշ աղբյուրների՝ նոր ծրագրերի իրականացման արդյունքում Թուրքմենստանից Ռուսաստան ձգվող գազատարային հզորությունները կհասնեն 160 մլրդ մ^3 մեկ տարվա ընթացքում, ինչն էականորեն գերազանցում է Թուրքմենստանի գազի արտադրման ծավալները: Հնարավոր է, որ կառուցվելիք գազատարը որոշակի շրջանում հիմք հանդիսանա մեկ էներգատրանսպորտային անոթով իրար կապել աշխարհի երկու խոշորագույն գազային տերությունները՝ Ռուսաստանը և Իրանը:
- Միևնույն ժամանակ, Ղազախստանի նախագահը մի շարք կարևոր առաջարկություններ արեց, որոնք ընդունվեցին Ռուսաստանի և Թուրքմենստանի նախագահների կողմից: Խոսքը ղազախական Երալիևո կայարանից մինչև թուրքմենական Թուրքմենբաշի քաղաք երկաթգծի և ավտոճանապարհի կառուցման մասին է: Այս երկու տրանսպորտային ուղիները, փաստորեն, կմիավորեն մեկ երկաթգծային և ավտոճանապարհային առանցքում ռուսական Կալինինգրադից և իրանական Բենդեր Աբաս նավահանգիստ ձգվող տարածքը: Ծրագրերը կիրականացվեն «Հարավ-Հյուսիս» տրանսպորտային միջանցքի ստեղծման շրջանակներում, որին ակտիվ մասնակցություն է խոստացել թուրքմենական առաջնորդ Կ.Բերդիմուխամետովը:

- Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինի հետ հանդիպման ընթացքում Թուրքմենստանի ղեկավարը հայտարարեց, որ պատրաստվում է բավական լուրջ ազատականացում մտցնել Թուրքմենստանի էներգետիկ ոլորտում և հրավիրեց ռուսական և ղազախական ընկերություններին համատեղ զարգացնել Կասպից ծովի թուրքմենական հատվածում գտնվող գազի հանքավայրերը:
- Ղազախստանի հետ բանակցությունների համեմատական հաջողություն կարելի է համարել այն, որ Ն.Նազարբաևը հայտարարեց, թե Աստանան ցանկանում է միանալ Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթատարի շահագործմանը, ինչի համար հարկավոր է ավելացնել Կասպյան նավթատարային կոնսորցիումի հզորությունը 17 մլն տոննայով: Չնայած Աստանայի լավատեսությանը՝ Պուտին-Նազարբաև հանդիպումից երկու օր անց ՌԴ փոխվարչապետ և էներգետիկայի նախարար Վ.Խրիստենկոն հայտարարեց, թե նավթատարի հզորացման առնչությամբ վաղ է խոսել Ռուսաստանի համաձայնության մասին:

Հարկ ենք համարում նշել, որ եռակողմ բանակցությունների ավարտից հետո Ռուսաստանի, Ղազախստանի և Թուրքմենստանի նախագահներին ուղղված հարցերից մեկը հնչում էր մոտավորապես այսպես. նշանակո՞ւմ է արդյոք, որ նոր եռակողմ համաձայնագրերի ստորագրումից հետո վերանում է Տրանսկասպյան գազատարի կառուցման հնարավորությունը Թուրքմենստանից Ադրբեջան: Այս հարցին թուրքմենական առաջնորդը տվեց բացասական պատասխան՝ ավելացնելով, որ Թուրքմենստանի գազի հսկայական պաշարները բավարար են տարբեր նախագծերի իրագործման համար: Ինչպես նշում է ռուսական *«Վեդոմոստի»* թերթի թղթակիցը, այսպիսի պատասխանից հետո ՌԴ նախագահ Վ.Պուտինի երեսին քմծիծաղ երևաց, ինչը, ըստ թղթակցի, հետևանքն էր այն գիտակցման, որ նոր գազատարի կառուցումից և շահագործման հանձնումից հետո դժվար թե Թուրքմենստանի համար հնարավոր լինի նոր խոշոր գազային նախագիծ իրականացնել:

Մերձկասպյան գազատարի կառուցումը, անկասկած, կնվազեցնի Տրանսկասպյան գազատարի կառուցման հնարավորությունը և մեծ հարված կհասցնի այս նախագծի հիմնական գաղափարախոս ԱՄՆ շահերին: Սակայն ռուս-թուրքմենա-ղազախական հռչակագրի ստորագրումը մատնանշում է Կենտրոնական Ասիայում Ռուսաստանի դիրքերի կտրուկ ամրապնդում նաև Չինաստանի էներգետիկ շահերի հաշվին:

Ներքաղաքական վերադասավորումներ Թուրքմենստանում և չինական էներգետիկ դիրքերի թուլացումը

Մայիսի 15-ին *Associated Press-ը* հաղորդում տարածեց, որ Թուրքմենստանի նախագահի հրամանով աշխատանքից ազատվել է նախագահի անվտանգության ծառայության պետ Ախմուրադ Ռեդջեբովը, որն այս պաշտոնը զբաղեցնում էր դեռ նախորդ նախագահ Թ.Նիյազովի օրոք: Ա.Ռեդջեբովը, բացի նրանից, որ Թ.Նիյազովի մահից հետո իր ազդեցությամբ երկրում երկրորդ մարդն էր, միևնույն ժամանակ նաև բացառիկ անձնավորություն էր կառավարման համակարգում, որը չէր հանդիսանում, այսպես կոչված, տիկինյան տարածքային կլանի (Թ.Նիյազովի օրոք այս կլանի ներկայացուցիչները կազմում էին կառավարության 2/3-ը) ներկայացուցիչ: Ա.Ռեդջեբովը փոքրաքանակ էռսարյան տարածքային կլանի ներկայացուցիչ է: Էռսարյան ցեղախմբի կենտրոնացման հիմնական վայրը Թուրքմենստանում Ուզբեկստանին սահմանակից Լեբափյան վելայաթն է, որտեղ էլ հենց գտնվում է Թուրքմենստանի չմշակված գազի հանքավայրերի մեծ մասը: Հենց այս հանքավայրերի շահագործման արդյունքում պետք է ստեղծվեր Թուրքմենստան-Ուզբեկստան-Չինաստան գազատարը, որի կառուցման հիմնական քարոզիչներից էր Ա.Ռեդջեբովը, որը (զբաղեցնելով նախագահի անվտանգության ծառայության պետի պաշտոնը), էներգետիկ ոլորտում համագործակցության հարցերի քննարկման համար սույն թվականի ապրիլին այցելել էր Պեկին: Նշենք, որ Կ.Բերդիմուխամետովը նախագահ դառնալուց հետո առաջին պաշտոնական հարցազրույցը տվել էր չինական «Սինխուա» տեղեկատվական գործակալությանը՝ նշելով էներգետիկ ոլորտում թուրքմենա-չինական համագործակցության զարգացման կարևորությունը:

Այստեղ կարևոր հանգամանք է հետևյալը. թուրքմենա-ղազախա-ռուսական նոր գազատարի կառուցման պարագայում այս խողովակաշարով ենթադրվում է, որ դեպի Ռուսաստան և ապա ԵՄ պետք է արտահանվի Լեբափյան վելայաթի գազը, որի արդյունահանումը կսկսվի մոտակա երկու տարիների ընթացքում: Սա նշանակում է, որ սեպտեմբերին նախատեսված թուրքմենա-չինական համաձայնագրի կնքումը Թուրքմենստան-Չինաստան գազատարի կառուցման վերաբերյալ կարող է տեղի չունենալ մեկ պարզ պատճառով. գազի պաշարների վերաբաշխումն այսօր արդեն իսկ կատարվել է, և այն չի ենթադրում դեպի Չինաստան տանող գազատարի կառուցում:

Ըստ մեզ մոտ կանգնած աղբյուրների՝ Ա.Ռեդջեբովի հեռացումն աշխատանքից, որն իրականում տեղի է ունեցել դեռ ապրիլի վերջին, կապված է եղել չինական գործոնի թուլացման և Էռսերյան կլանի «գլխատման» նպատակով: Այս հեռացման արդյունքում նպատակ կա լիարժեք վերահսկողություն հաստատել Լեփաբյան վելայաթի վրա, որտեղ զարգացումները վերջին ամիսներին բավական անհանգստացնող էին դարձել թուրքմենական ղեկավարության համար[1]:

Հետևություններ

Վ.Պուտինի այցը Կենտրոնական Ասիա բավական կարևոր փոփոխությունների հիմք կարող է հանդիսանալ տարածաշրջանային էներգետիկ զարգացումներում: Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները.

1. Մերձկասպյան գազատարի կառուցումը նվազեցնում է Տրանսկասպյան գազատարի կառուցման հնարավորությունը, ինչը կազդի Ադրբեջանի՝ որպես Կենտրոնական Ասիա գազի տարանցման կենտրոնական պետության վերածվելու հեռանկարի վրա:
2. ՌԴ կողմից Կասպյան նավթատարային կոնսորցիումի նավթատարի հզորացմանը համաձայնելը և Ղազախստանի միացումը Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նախագծին կավելացնի ղազախական նավթի արտահանումը Ռուսաստանի տարածքով և կսահմանափակի Աստանայի հեռանկարային կախվածությունը Բաքու-Ջեյհան նավթատարից:
3. Թուրքմենստանից Ռուսաստան նոր նավթատարի կառուցումը և հին ուղիների հզորացումն ավելի սերտ կդարձնեն Ռուսաստանի և Իրանի գազատարային համակարգերի կապը: Հաշվի առնելով Իրան-Հայաստան և Ռուսաստան-Վրաստան-Հայաստան գազատարերի առկայությունը՝ այդ կապվածությունը կդառնա արտատարածաշրջանային՝ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններով:

Վերը նշված հանգամանքները խոսում են այն մասին, որ էներգետիկ համագործակցության ոլորտում զարգացումները թևակոխում են կարևոր և ակտիվ փուլ, ինչը ևս մեկ անգամ հուշում է այն մասին, որ արդեն իսկ հասունացել է ՀՀ էներգետիկ անվտանգության հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը:

Սևակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

[1] Ըստ նույն աղբյուրի՝ վերջին շրջանում խոսակցություններ էին պտտվում, թե Ա.Ռեդջեբովը Չինաստանի և Ուզբեկստանի օգնությամբ մտադրվել էր սկսել Լեփաբյան վելայաթի՝ Թուրքմենստանից անջատվելու փորձեր, որի արդյունքում պետք է ստեղծվեր կամ նոր պետություն, կամ էլ այս վելայաթը ինքնավարության կարգով պետք է միանար Ուզբեկստանին:

ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ.
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին շրջանում ակնհայտ են դարձել իսլամական աշխարհում գերակա դիրքեր ունենալու Ինդոնեզիայի, որոշ առումով՝ նաև Մալայզիայի հավակնությունները, ինչը նոր տեղաշարժ է միջազգային հարաբերություններում: Վերջիններիս այլևս չի գոհացնում ծայրամասային իսլամական երկրներ կամ իսլամական աշխարհի «ֆորփոսթ» լինելու հանգամանքը: Տնտեսական բարձր ցուցանիշներ ունեցող այս երկրները մարտահրավեր են նետում առաջին հերթին արաբական երկրներին, որոնք գիտակցվում են որպես իսլամի ավանդական տարածման շրջաններ:

Սառը պատերազմի ավարտից և երկբևեռ աշխարհի փլուզումից հետո Հարավարևելյան Ասիայի մահմեդական երկրներում սկիզբ առան իսլամական վերածննդի գործընթացներ: Ինդոնեզիայում՝ իսլամական աշխարհի ամենամեծ բնակչություն (240 միլիոն) ունեցող երկրում, այն ժամանակագրորեն համընկավ Սուհարթոյի (1967-1998) աշխարհիկ վարչակարգի վերջին շրջանին: Արդեն Սուհարթոյին հաջորդած երկու նախագահները՝ Յուսուֆ Հաբիբին (1998-1999) և Աբդուռահման Վահիդը (1999-2001), երկրում որոշ չափով ակտիվացրին իսլամական դիսկուրսը: 2004թ. Ինդոնեզիայում նախագահական երկու թեկնածուները՝ Մեգավաթի Սուքարնոպուտրին (2001-2004) և Սուսիլո Յուդհոյոնոն, նախընտրական քարոզչության շրջանակներում «փոքր» հաջ կատարեցին Մեքքա: Իսկ Մալայզիայի վարչապետ Մահաթիր բին Մուհամադը (1981-2003), նախաձեռնությունը իսլամականներից վերցնելու նպատակով, առաջ քաշեց երկրում իսլամի դերի ու նշանակության մասին սեփական գաղափարը: Նրանից հետո 2003թ. վարչապետ դարձավ աստվածաբանական կրթություն ունեցող Աբդուլլա Բադավին:

Նախկինում իսլամական աշխարհում ոչ այնքան ազդեցիկ աշխարհիկ այս երկրների ներքին և արտաքին քաղաքականության մեջ աստիճանաբար սկսեց ուրվագծվել իսլամական կուրսը, որը շատ դեպքերում ուղղորդվում էր հասարակությունների ներսից: Ինդոնեզիան և Մալայզիան սկսեցին գիտակցվել որպես չափավոր իսլամական երկրներ:

Թե՛ Ինդոնեզիայում և թե՛ Մալայզիայում համոզված են, որ իսլամական աշխարհում առաջնային դերակատարություն ունենալու համար պարտադիր չէ լինել իսլամի հայրենիքը և կամ էլ Ղուրանի լեզվի՝ արաբերենի կրողը: Այդ երկրներում ձգտում կա իսլամը մեկնաբանել և կիրառել ոչ թե արաբական տեսանկյունից, այլ՝ ազգային ինքնությունը հաշվի առնելով: Ըստ այդմ՝ Մուհամմադ մարգարեի ուսմունքին հետևել չի նշանակում ընդօրինակել օտար կենսակերպ, ուստի մարգարեի արաբական ծագումը չի կարող արդարացնել արաբականացումը: Ինդոնեզիայի մզկիթներում կրոնական ծիսակարգի լեզուն ինդոնեզերենն է և ոչ թե արաբերենը: Այստեղ աստիճանաբար սկսում է դուրս մղվել ողջույնի իսլամական *«assalamu alaikum»* ձևը՝ իր տեղը զիջելով ողջույնի ինդոնեզական *«selamat pagi»* և *«selamat sore»* ձևերին: Արաբական երկրների իմիջը հարցականի տակ է դրվում: Արաբական աշխարհը քննադատվում է իսլամական ումմայի խնդիրները լուծելու անկարողության մեջ:

Լինելով ծայրամաս՝ միևնույն ժամանակ, այս երկրներում ձևավորվել է համապատասխան արձագանք իսլամական աշխարհին հուզող բոլոր հիմնահարցերի նկատմամբ, ինչի կարևոր բաղադրիչներն են պաղեստինյան, իրաքյան, լիբանանյան, իրանական և այլ խնդիրները: Իսլամական աշխարհում շարունակվող միջդավանական և միջէթնիկ հակասությունները, լարված քաղաքական իրավիճակը, միասնությանն ու առկա հիմնախնդիրների կարգավորմանն ուղղված արաբական երկրների ոչ այնքան հաջողված քայլերը և, վերջապես, Մերձավոր և Միջին Արևելքում ԱՄՆ աճող դերակատարությունն այստեղ սուր ձևով են ընկալում: Դեռևս 2003-ին մեծ արձագանք գտավ Մալայզիայում Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) գագաթաժողովում այդ երկրի վարչապետ Մահաթիր բին Մուհամադի ելույթը, ով նշեց,

թե իսլամական աշխարհը մերժում է օտար արևմտյան ժողովրդավարական սկզբունքներն ու իսլամական աշխարհում ամերիկյան գործողությունների տրամաբանությունը:

Պետք է ասել, որ հարավարևելյան իսլամական հասարակությունների առանձին շրջանակների բնորոշ են հակաարևմտյան տրամադրությունները: Այս առումով ուշագրավ է 2006թ. նոյեմբերի 20-ին նախագահ Ջ.Բուշի՝ Ջակարտա կատարած վեցժամյա այցը, որն ուղեկցվեց բողոքի զանգվածային ակցիաներով: Նախքան նախագահի այցելությունը, իսլամական արմատական կազմակերպությունների հարյուրավոր ներկայացուցիչներ ԱՄՆ դեսպանության առաջ կազմակերպեցին բողոքի ցույց: Նրանք կոչ էին անում Ինդոնեզիայի ժողովրդին և կառավարությանը թույլ չտալ Բուշի այցը: Ջակարտայում շուրջ հինգ հազար ցուցարարներ, նկատի ունենալով ԱՄՆ իրաքյան քաղաքականությունը, պահանջում էին ֆիզիկական հաշվեհարդար տեսնել այդ երկրի նախագահի հետ:

Թե՛ Ինդոնեզիան և թե՛ Մալայզիան միջազգային առանձին հարցերում պարբերաբար հանդես են գալիս քաղաքական ակտիվությամբ: Դեռևս 2005-ի մայիսին Յուդհոյոնոն հայտարարեց, որ միջազգային ասպարեզում ուզում է լինել խաղաղասեր գործիչ և նպաստել առկա բարդ խնդիրների լուծմանը: 2006թ. մայիսին Իրանի նախագահ Ահմադինեժադի՝ Ջակարտա կատարած պաշտոնական այցելության ժամանակ Յուդհոյոնոն հայտնեց, որ աջակցում է Իրանի՝ խաղաղ նպատակներով զարգացվող միջուկային ծրագրին: Սակայն միջազգային հարաբերություններում գործուն դերակատարություն ունենալու Ինդոնեզիայի քայլերը միշտ չէ, որ համարժեք արձագանք են գտնում: Ասվածի ապացույցն է այն փաստը, որ Իրանի նախագահը մերժեց իրանա-ամերիկյան հարաբերություններում միջնորդ դերակատարություն ստանձնելու Ինդոնեզիայի առաջարկը՝ նշելով, որ ցանկանում է սեփական ուժերով լուծել իր երկրի առաջ ծառացած խնդիրները:

2006թ. իսրայելա-լիբանանյան պատերազմը հնարավորություն տվեց Հարավարևելյան Ասիայի երկրներին՝ հանդես գալ որոշակի նախաձեռնությամբ: Իսլամական կոնֆերանս կազմակերպության Կուալա Լումպուրի արտահերթ հանդիպմանը որոշվեց ՄԱԿ հովանու ներքո Լիբանան ուղարկել նաև Ինդոնեզիայից, Մալայզիայից և Բրունեյից շուրջ 2000 խաղաղապահների: Հակամարտության ամենասուր շրջանում Մալայզիայի արտաքին գործերի նախարար Սեյիդ Համիդ Ալբարը ԻԿԿ անդամ պետություններին կոչ արեց «Հիզբալլահին» զենք ուղարկել: Նա նշեց, որ իսլամական երկրները չպետք է Իսրայելին անպատիժ թողնեն:

Թե՛ Մալայզիան և թե՛ Ինդոնեզիան հաճախ են հանդես գալիս պաղեստինցի ժողովրդի իրավունքների պաշտպանությամբ՝ Իսրայելին մեղադրելով ագրեսիայի մեջ: 2007թ. հունվարին պաղեստինյան ռազմաքաղաքական երկու ուժերի միջև ստորագրված Մեքքայի հայտնի համաձայնագրից հետո Հասան Վիրայուդան՝ Ինդոնեզիայի արտգործնախարարը, հայտնեց, որ իր երկիրը պատրաստ է որպես միջնորդ հանդես գալ «Համասի» և «Ֆաթհի» միջև:

Ինդոնեզիան առաջ է քաշել նաև իրաքյան ճգնաժամի հաղթահարման սեփական ծրագիր, որի հիմքում ընկած է Իրաքից ԱՄՆ դուրս գալու և այնտեղ ՄԱԿ կամ մեկ այլ երրորդ ուժի՝ տվյալ դեպքում Իսլամական կոնֆերանս կազմակերպության խաղաղապահ ուժերի տեղակայման գաղափարը: Բացի այդ, Ինդոնեզիան իր պատրաստակամությունն է հայտնել սեփական խաղաղապահ ուժերն ուղարկել Իրաք՝ այդպիսով օրինակ ցույց տալով մնացած իսլամական երկրներին:

Հավատարիմ մնալով իսլամական քարոզչությանը՝ 2007թ. հունվարի վերջին Ինդոնեզիան Պակիստանի հետ կազմակերպեց իսլամական երկրների պառլամենտականների միջազգային ֆորում՝ նվիրված իսլամական միասնության և անվտանգության խնդիրներին: Հանդիպմանը, որին մասնակցեցին 28 երկրներ, կարևորվեց իսլամական երկրների միասնության անհրաժեշտությունը՝ որպես մերձավորարևելյան տարածաշրջանում ԱՄՆ ազդեցությանը հակակշիռ ստեղծելու հանգամանք: Փերվեզ Մուշարաֆը և Սուսիլո Յուդհոյոնոն, անհանգստություն հայտնելով շիաների և սուննիների միջև առճակատման կապակցությամբ, առաջարկեցին միջազգային իսլամական կոնֆերանս կազմակերպել մահմեդական աշխարհի ազդեցիկ կրոնական գործիչների մասնակցությամբ՝ մշակելու համար ֆեթվաներ, որոնք պետք է ուղղված լինեն Մերձավոր Արևելքում խաղաղության և համաձայնության հաստատմանը: Կոնֆերանսի կազմակերպման պատասխանատվությունը դրվեց Ինդոնեզիայում մեծ

համարում ունեցող երկու իսլամական խոշորագույն կառույցների՝ «Նահդաթուլ Ուլամայի» և «Մուհամմադիյայի» ղեկավարների վրա:

2007թ. հունվարին Ինդոնեզիան դարձավ ՄԱԿ Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ: Այս կապակցությամբ երկրի նախագահը հավաստիացրեց, որ միջազգային ասպարեզում վարելու է իսլամական օրակարգ և պայքարելու է իսլամաֆոբիայի դեմ: Սակայն շուտով ԱԽ-ում Ինդոնեզիան ԱՄՆ ճնշմամբ քվեարկեց Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ պատժամիջոցներն ուժեղացնելու օգտին: Իսլամական աշխարհը, որ զգայուն է նման դրսևորումների ժամանակ, անմիջապես արձագանքեց: Խնդիրն այն է, որ իսլամական աշխարհում առաջնության հավակնող ցանկացած երկիր ստիպված պետք է լինի շատ դեպքերում ԱՄՆ հետաքրքրություններին հակոտնյա կողմնորոշումներ ունենալ, հակառակ դեպքում՝ կկորցնի հեղինակությունը:

2007թ. ապրիլի 3-4-ը Ինդոնեզիայում (Բոհորի նախագահական պալատում) տեղի ունեցավ նախատեսված միջազգային իսլամական կոնֆերանսը, որին հրավիրված 21 բարձրաստիճան կրոնավորներից մասնակցեցին միայն 12-ը: Սիրիայի, Եգիպտոսի, Իրանի ու Իրաքի սուննի և շիա առաջնորդները մերժեցին հրավերը՝ պատճառաբանելով այն Ինդոնեզիայի քվեարկության փաստով: Հանդիպմանն ընդունվեց հռչակագիր, որտեղ շիա և սուննի կրոնավորները պարտավորվեցին մի կողմ թողնել հակասություններն ու ուղիներ որոնել համախմբվելու համար, ինչը, թերևս, միայն քարոզչական բնույթ է կրում:

Առհասարակ, իսլամի նշանակությունը, որպես համաշխարհային քաղաքականության բաղադրիչ, պարբերաբար աճում է, ինչը նկատելի է նաև Ինդոնեզիայի ու Մալայզիայի պարագայում: Այսօր իսլամական շատ երկրներում (այդ թվում և հարավարևելասիական) իսլամիստական ուժերը, որ մինչ այդ ընդդիմադիր էին իշխող վարչակարգերին, աստիճանաբար դառնում են լեգիտիմ ու նաև ժողովրդի կողմից աջակցություն ստացող: Մալայզիայում այսօր մեծ ժողովրդականություն ունեն առանձին իսլամական շարժումներ, որոնցից են՝ Պանմալայզիական իսլամական կուսակցությունը (որ ունի մեկ միլիոն անդամ և աջակից), Մալայզիական իսլամական երիտասարդական շարժումը (որ ունի կես միլիոն աջակից) և այլն: Ինդոնեզիայում ժողովրդականություն է վայելում Ինդոնեզիայի Արդարություն և բարգավաճում կուսակցությունը, որը սկիզբ առավ որպես ուսանողական շարժում և նպաստեց իշխանությունից Սուհարթոյին հեռացնելուն, ապա հայտնվեց կառավարության կոալիցիոն ուժերի մեջ՝ որպես հանգուցային դերակատար:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ Հարավարևելյան Ասիայի իսլամական երկրներն իրականում փորձում են լուծել ավելի բարդ խնդիր՝ կապված միջազգային մեծ ասպարեզ դուրս գալու հետ: Իսլամական ուղղությունն այդ պարագայում դառնում է արտաքին քաղաքականության կարևոր բաղադրիչը: Միջազգային քաղաքականության նոր ծանրության (խաղաղօվկիանոսյան) կենտրոնի մասին խոսելիս՝ Հենրի Քիսինջերը նշում է, որ ներկայումս միջազգային ասպարեզի գրեթե բոլոր «խաղացողները» ձգտում են նորովի ձևակերպել սեփական դերակատարումները:

Ինդոնեզիայի և Մալայզիայի ձգտումը՝ միջամտել իսլամական ումմայի միջազգային գործերին, վկայում է նաև իսլամական աշխարհում տեղի ունեցող նոր գործընթացների, մասնավորապես այն մասին, որ ավանդականորեն իսլամական հիմնահարցերի առաջատարը համարվող արաբական աշխարհը որոշակիորեն սպառել է իրեն: Որպես կանոն, իսլամական աշխարհում գերակայության հավակնություններ ունեցող հիմնական երկրներին (Սաուդյան Արաբիա, նաև՝ Պակիստան, Իրան) այսօր ավելանում է խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը:

Արաքս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ՆՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Թիֆլիսահայ իրականության շուրջ արդեն ավանդական դարձած մեր հրապարակումներում շարունակում են գերիշխել խնդրահարույց թեմաները, որոնք ուղղակիորեն (երբեմն՝ անուղղակիորեն) առնչվում են վրաց հասարակության վերաբերմունքին տեղի հայության նկատմամբ[1]: Թիֆլիսահայ ներհամայնական կյանքի քննարկումը, որպես կանոն, սահմանափակվում է հենց վրացիների՝ հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի քննարկմամբ: Միևնույն ժամանակ, նվազ ուշադրություն է դարձվում հայերի շրջանում առկա տրամադրություններին, վրացիների կամ տարբեր խմբերի (ըստ սոցիալական կամ ռեգիոնալ բաժանման) հանդեպ ունեցած դիրքավորմանը: Այնինչ, այս հարցը նույնպես ուշադրության կարիք ունի և շատ խնդիրներում կարող է լույս սփռել ընդհանուր առմամբ նաև հայ-վրացական հարաբերություններին ամբողջովին:

Այս իմաստով է, որ թիֆլիսահայ համայնքը, նրանում տիրող տրամադրություններն ու հոգեբանական մթնոլորտը ինչ-որ տեղ կարող են ծառայել նաև որպես հայ-վրացական միջէթնիկ հարաբերությունների ներկա իրավիճակի ցուցիչ[2]:

Վերջերս վիրահայության շրջանում տեղի է ունենում երկարատև լճացման և անորոշությունների շրջանից անցում մի փուլի, երբ ձևավորվում է ստեղծված իրավիճակի համարժեք պատկեր: Այս փուլը բնորոշվում է հստակ խնդիրների ձևակերպմամբ: Այլ խոսքերով, եթե Վրաստանի անկախության առաջին տասնամյակում վիրահայերն առկա դժվարությունների պատճառները որոնում էին ընդհանուր սոցիալ-տնտեսական խնդիրների հարթությունում և բացատրում անցումային շրջանին բնորոշ երևույթներով, ապա այսօր պատասխանները հստակ են և տանում են դեպի էթնոքաղաքական հարթություն:

Հետևենք վերջին զարգացումներին:

Վրաստանում արդեն երեք տարի շարունակ Թուրքիայի դեսպանատան մոտ անցկացվում է խաղաղ ցույց՝ 1915թ. Ցեղասպանության ճանաչման պահանջով: Այն կազմակերպվում է տեղի ակտիվ հայերի ջանքերով, որոնք հիմնականում միավորված են հասարակական կազմակերպությունների շրջանակներում և փորձում են հնարավոր միջոցներով բարձրացնել համայնքում ներքին ակտիվությունը, թուլացնել հոգեբանական ընկճվածությունն ու ազգային խնդիրների հանդեպ տիրող անտարբերությունը. այս վերջին մտահոգիչ երևույթներ, որոնց մասին մենք բազմիցս նշել ենք մեր հրապարակումներում, ցավոք, դարձել են թիֆլիսահայ համայնքի հիմնական ախտանիշները: Միևնույն ժամանակ, վերջին շրջանի համար հուսադրող է այն փաստը, որ ստեղծված իրադրության հետևանքով առկա վտանգներն արդեն գոնե գիտակցված և ձևակերպված են թիֆլիսահայ որոշակի շրջանակներում:

Համայնքի ներսում (թեպետ թիֆլիսահայ իրականության համար «համայնք» եզրը պետք է կիրառել որոշ վերապահումներով) աստիճանաբար ձևավորվում է երիտասարդության մի

---

[1] Նշենք, որ հայ ուսումնասիրողները, որպես կանոն, նշում են վրացական ընտրանու կամ իշխանությունների դիրքորոշման (քաղաքականության) մասին հայերի հանդեպ, բայց մենք օգտագործում ենք «վրաց հասարակություն» ձևակերպումը: Պատմական առումով, իրավամբ հայ-վրացական հակասությունները, առավելապես դրսևորվելով Թիֆլիսում, սահմանափակվել են ազգայնական ընտրանու շրջանակներով և չեն ընդգրկել վրաց հասարակությունն ամբողջությամբ: Բայց վերջին շրջանում մենք նկատում ենք այդ հակասությունների սոցիալական շրջանակների ընդլայնում ևս, որին մենք կանդրադառնանք մեր առաջիկա հրապարակումներից մեկում:

[2] Եթե Ջավախքի խնդրի քննարկումն առավելապես արտահայտում է հայ-վրացական հարաբերությունները քաղաքական ենթատեքստով, ապա Թիֆլիսահայ համայնքի խնդիրը հարուստ նյութ է միջէթնիկ հարաբերությունների քննարկման համար:

փոքր հատված, որը, կարծես թե, պատրաստ է որոշակի ներդրումներ կատարել համայնքի վերազարթոնքի ուղղությամբ։

Այս առիթով, հարկ է նշել, որ այս տարի ապրիլի 24-ի ավանդական միջոցառումներն առավել կազմակերպված են անցկացվել։ Բայց նշանակալին այն է, որ Վրաստանում Թուրքիայի դեսպանատան առջև խաղաղ ցույցն աննախադեպ էր մասնակիցների թվաքանակով՝ 450-500, ընդ որում՝ խիստ անբարենպաստ եղանակային պայմաններում (նշենք, որ անցած տարի մասնակիցների թիվը չէր գերազանցում 50-70-ը)։

Ինչո՞ւ է մեր կողմից կարևորվում այս փաստը։ Բանն այն է, որ ապրիլի 24-ին ավանդաբար անցկացվող միջոցառումները տեղի են ունենում Ս.Գևորգ եկեղեցում և Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան Հայկական պետական դրամատիկական թատրոնի շենքում, որտեղ ներկա են գտնվում ոչ միայն տեղի հայության ակտիվ ներկայացուցիչները, այլև պետական պաշտոնյաներ, Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը, համայնքի աչքի ընկնող անդամներ։ Նման միջոցառումները, որպես կանոն, առավել ձևական բնույթ են կրում և հասարակության կողմից ընկալվում են որպես «վերևից» կազմակերպված միջոցառումներ։

Բոլորովին այլ ազդեցություն ունի վերոնշյալ խաղաղ ցույցը, քանի որ այն կազմակերպվում է հասարակականապես ակտիվ երիտասարդների կողմից, և ոչ մի պաշտոնյա, բնականաբար, ներկա չի գտնվում թուրքական դեսպանատան առջև կազմակերպվող խաղաղ ցույցին։ Եվ այս միջոցառումն ուշագրավ է այնքանով, որ կազմակերպված է «ներքևից» և ինքնաբուխ է, նաև մասնակիցները գիտեն, որ այս միջոցառումն այնքան էլ չեն ողջունվում վրացական իշխանությունների կողմից[1]։ Բացի այդ, նախորդ օրը՝ ապրիլի 23-ին, անցկացվել էր նաև ջահերով բողոքի խաղաղ ցույց՝ «Հիշատակի ու պայքարի հուրը», կրկին Վրաստանում Թուրքիայի դեսպանատան առջև (կազմակերպվել էր տեղի ՀԿ-ներից մեկի՝ Վրաստանի Հայկական համագործակցության կենտրոնի (ՎՀՀԿ) ջանքերով)։

Ակնհայտ է, որ թիֆլիսահայ երիտասարդության (գոնե այն հատվածի, որն ամեն կերպ ձգտում է հավատարիմ մնալ ազգային արմատներին) շրջանում ներկայումս ակտիվացել են ներազգային համախմբող գործընթացները։ Եթե առաջներում ներքին ընդվզումը կրում էր առավել տարերային և հատվածական բնույթ, ապա այսօր արդեն կազմակերպված երիտասարդությունը ոչ միայն կշռադատված ու հետևողական է նույն խնդիրների նկատմամբ, այլև հստակ պատկերացնում է նաև իր ներուժը։ Իրականում այդ ներուժն այնքան էլ հզոր չէ, ավելին՝ այն բավական թույլ է, բայց կա դրա ուժեղացման անհրաժեշտության և նպատակային օգտագործման հստակ գիտակցություն։

Ցավալի է, որ նման հուսադրող ներազգային համախմբման գործընթացներն ընդգրկում են սահմանափակ շրջանակներ (ոչ միայն քանակական, այլև տարիքային իմաստով)։ Խնդիրն այն է, որ ավագ սերնդի ներկայացուցիչները, որոնք քիչ թե շատ մտահոգված են համայնքի գոյապահպանման խնդիրներով, կամ միայնակ են գործում, կամ գտնվում են ստվերում, կամ էլ ակտիվություն ցուցաբերելու դեպքում հեռացվում են աշխատանքից։

Նման դեպք տեղի ունեցավ վերջերս Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան Հայկական պետական դրամատիկական թատրոնի փոխտնօրեն, գրող Ռաֆայել Գրիգորյանի հետ։ Նա հանդգնել էր վրացական հեռուստաալիքով (Ռուսթավի-2) արտահայտել իր համաձայնությունն այն կարծիքին, որ Վրաստանում հայկական մշակութային ժառանգության նկատմամբ վանդալիզմի ակտեր են տեղի ունենում։ Հաջորդ օրը Ռ.Գրիգորյանին կանչում են հարցաքննության Վրաստանի Անվտանգության նախարարության Իսանի-Սամգորի բաժանմունք, ինչի հետևանքով Գրիգորյանը հայտնվում է «խաղից դուրս» իրավիճակում. *հայկական թատրոնի հայազգի կոլեկտիվի որոշմամբ հեռացվում է աշխատանքից։*

Անշուշտ, բավական ցավալի դեպք է տեղի ունեցել։ Խնդիրը ոչ այնքան վրացական իշխանությունների վարած հակահայկական ներքին քաղաքականությունն է։ Առավել մտահոգիչն այն է, որ նշված դեպքից հետո թիֆլիսահայ համայնքում տեղի որևէ բացահայտ վրդովմունք կամ կազմակերպված ընդվզում տեղի չունեցավ (բացի վերոնշյալ ՀԿ-ից, որը

[1] Նշենք նաև, որ այս տարի ակտիվ մասնակցություն էր ցուցաբերել նաև Թբիլիսիի քրդական համայնքը, որի ներկայացուցիչները մինչև վերջ կանգնած են եղել դեսպանատան առջև իրենց դրոշներով, ինչպես նաև ռուսներ, վրացիներ։

մամլո հաղորդագրություն էր տարածել և դատապարտել արարքը՝ միաժամանակ կոչ անելով վերականգնել Ռ.Գրիգորյանին իր զբաղեցրած պաշտոնում)։

Վրաստանի խորհրդարանի հայազգի հինգ պատգամավորներից և ոչ մեկը հանդես չեկավ քննադատությամբ։ Չլսվեց նաև դեսպանի ձայնը։

Ռ.Գրիգորյանի հետ կատարվածը ոչ միայն բացահայտում է Վրաստանում ազատ խոսքի և էթնիկ փոքրամասնությունների իրավունքների հարցերում տիրող իրավիճակը։ Կատարվածն, անշուշտ, կունենա այլ բացասական հետևանքներ ևս։

Բնական է, որ արդյունքում ավելի կթուլանան պայքարի ոգին, հայկականության պահպանման պատրաստակամությունը, անարդարության դեմ ընդվզելու ցանկությունն ու կարողականությունը համայնքի ներսում։

Մյուս բացասական հետևանքն այն է, որ խնդրին տեղեկացված հայ հասարակությունը հոգեբանորեն կօտարվի հայկական թատրոնից, քանի որ թատրոնի անձնակազմի արարքը միայն հիասթափություն կարող է առաջացնել հայերի շրջանում։

Այսպես. այս ցավալի դեպքը դատապարտող հայ երիտասարդությունն արդեն իր զոհունակությունն է արտահայտել այն փաստից, որ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Սրբազանը ներկա չի գտնվել հայկական թատրոնի այս տարվա թատերաշրջանի բացմանը (թեպետ պաշտոնապես պարզ չէ, թե ինչու Սրբազանը ներկա չի եղել թատերաշրջանի բացմանը, բայց այստեղ կարևորը երևույթի ընկալումն ու գնահատումն է հասարակության կողմից, այլ ոչ Սրբազանի ներկա չգտնվելու իրական պատճառը)։

Անկասկած, նման զարգացումները մտահոգիչ են, քանի որ մինչև վերջերս մեր այն հարցին, թե եթե Թիֆլիսում որևէ հայ խնդիր է ունենում, ո՞ւր է գնում, ստանում էինք հետևյալ պատասխանը՝ հայկական թատրոն։

Թամարա Վարդանյան
«Նորավանք» հիմնադրամ

ВОПРОСЫ РЕПАТРИАЦИИ И ОПТИМИЗАЦИИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

Возможно следующее определение двух уровней проблематики вопроса массовой репатриации армян в Республику Армения.

Первый уровень носит правовой характер и, в более предметной своей части, – характер законодательного оформления всего процесса репатриации. Здесь, с нашей точки зрения, необходимо принятие отдельного Закона Республики Армения о репатриации, который бы определил основные государственные подходы и принципы, конкретные нормы по репатриации наших соотечественников на свою историческую Родину. Закон о репатриации необходим с политико-правовой точки зрения для национального государства, за пределами которого проживает на порядок большее число лиц соответствующего этно-национального происхождения, чем в самом национальном государстве. Принятые в таком государстве законы о гражданстве, беженцах, о правовом положении иностранных граждан не могут охватить своим правовым регулированием весь спектр вопросов, связанных с общественными отношениями по поводу репатриации.

Смысл принятия Закона о репатриации в правовом аспекте состоит в том, что в нем определяется упрощенный порядок приобретения лицом гражданства государства своей национальной принадлежности, права и обязанности репатриантов, процедура и способы оказания помощи репатриантам. Очевидно, что статус репатрианта является промежуточным и во временном аспекте должен иметь минимальную продолжительность. Главная цель наделения лица статусом репатрианта выражается в необходимости предоставления ему в самой ближайшей перспективе статуса полноправного гражданина того национального государства, куда данное лицо переселяется на постоянное место жительства. Несмотря на свою «недолговременность», тем не менее, статус репатрианта (документальным выражением данного статуса выступает репатриационная виза и (или) удостоверение репатрианта, выдаваемые соответствующим государственным органом принимающей страны – как правило, дипломатическими или консульскими представительствами) наделяет лицо дополнительными правами и налагает определенные обязанности, которые должны быть признаны, закреплены, гарантированы и процессуально оформлены в отдельном Законе о репатриации.

Иные вопросы, помимо указанного признания, закрепления, гарантирования и процессуального (процедурного) оформления прав репатрианта и членов его семьи, могут быть урегулированы другими нормативно-правовыми актами, положения которых основываются на Законе о репатриации, соответствуют ему и конкретизируют его нормы (например, постановления правительства, акты ведомственного характера, акты органов территориального управления и местного самоуправления).

Другой уровень вопроса репатриации связан с экономическими аспектами ее реализации, который, как нам представляется, отягощен большей проблематикой, чем правовой уровень репатриации. Исследование «экономики» репатриации выводит нас на горизонты непосредственного формирования механизмов реализации процесса репатриации и их эффективности.

Основными вопросами по «экономики» репатриации в нашем понимании являются:

1. вопрос права выбора репатриантом места своего постоянного жительства. Для принимающего государства не может быть безразличным вопрос постоянного поселения своих репатриантов. Этот вопрос может быть обусловлен как интересами и имущественным положением самого репатрианта (например, воссоединение семей, обладание собственным жилищем в стране репатриации), так и очевидными интересами государства, принимающего репатрианта и предоставляющего ему свое гражданство. В реалиях Армении должен быть

найден некий срединный вариант, учитывающий обе указанные составляющие в этом вопросе. Мировая практика указывает, что, как правило, государство поощряет поселение репатриантов в тех местностях на своей территории, которые специально отведены им для целесообразного (с государственной точки зрения) заселения и дальнейшего развития[1]. Если репатриант не в состоянии самостоятельно решить вопрос своего поселения и обустройства, то государство в специально предусмотренных местностях создает особые, благоприятные и создающие стимулы для репатриантов условия: бесплатное предоставление земельных участков; льготное кредитование, субсидирование строительства жилья; льготы в области налогообложения и т.п. В случае, если репатриант выбирает для постоянного проживания другой регион (не входящий в перечень рекомендуемых государством к заселению репатриантами), то содействие в обустройстве со стороны государства должно носить значительно менее льготный характер. В любом случае, полное самоотстранение государства от решения проблем обустройства репатрианта абсолютно неприемлемо;

2. вопрос трудоустройства и, в более широком плане, вопрос интеграции репатриантов в гражданское общество принимающей страны. В указанной сфере важен также вопрос знания языка. В условиях Армении, характеризующихся узким рынком занятости, высоким процентом безработицы, трудоустройство репатриантов, нуждающихся в этом, может явиться значительной проблемой. По всей видимости, выход возможен в совмещении вопроса трудоустройства и вопроса целесообразного для принимающего государства поселения репатриантов. В таком случае возможна сельскохозяйственная занятость определенного слоя репатриантов и их задействование в освоении незаселенных местностей страны;
3. вопрос проработки планов по предоставлению перемещаемым в Республику Армения капиталам репатриантов льготных режимов по части налогообложения и преференциального размещения в определенных отраслях экономики страны с установлением дополнительных механизмов гарантирования самих размещаемых капиталов. В данном аспекте возможны проблемы, связанные с тем фактом, что основные капиталы потенциальных переселенцев-армян размещены за рубежом в тех же сферах экономики, которые имеют преимущественное развитие и в самой Армении – это малый и средний бизнес. Эффективным решением данной проблемы может служить создание совместных предприятий.

Задачей стратегического свойства является необходимость использования непосредственного потенциала армянской Диаспоры за рубежом для осуществления репатриационных программ. Казалось бы, здесь налицо определенное противоречие: как может Диаспора спонсировать и быть заинтересованной в том, чтобы члены самой Диаспоры уезжали на историческую Родину?

В этом контексте, с нашей точки зрения, необходимо определиться в стратегическом плане по следующим вопросам:

1. какая Диаспора наиболее эффективна в свете защиты и лоббирования общеармянских интересов за рубежом;
2. что необходимо предпринять под углом зрения репатриационного процесса, для слома неблагоприятной демографической ситуации (и главное – тенденции) в Республики Армения[2];

---

[1] Так, в России указом президента «О мерах по оказанию содействия добровольному переселению в Российскую Федерацию соотечественников, проживающих за рубежом» (от 22 июня 2006 года) определены 12 регионов страны, рекомендуемых к заселению их соотечественниками: Красноярский, Приморский и Хабаровский края, Амурская, Иркутская, Калининградская, Калужская, Липецкая, Новосибирская, Тамбовская, Тверская и Тюменская области.

[2] Вопросы репатриации и демографии тесно связаны и акцентируются в странах с неблагоприятной демографической ситуацией. Например, *Национальная программа демографического развития России на период 2006-2015гг.* указывает, что «дальнейшее развитие России как жизнеспособного общества и государства невозможно без выработки и реализации стратегического и государственного плана

3. в каком виде возможна «оптимизация» Диаспоры, которая могла бы решать следующие задачи:
   - избежание ассимиляции армянской идентичности в Диаспоре;
   - повышение эффективности диаспорального ресурса по защите и лоббированию общеармянских интересов.

Возможны следующие общие подходы для решения указанных задач:

1. осуществление «аудита» структур и ресурсов Диаспоры совместными усилиями Республики Армения и представительными органами самой армянской Диаспоры за рубежом с целью выявления дееспособных, активных и прогрессивно развивающихся диаспоральных структур в контексте их эффективности в деле защиты и лоббирования общеармянских интересов;
2. поддержка, опирающаяся на финансовые возможности Диаспоры и Республики Армения, всем тем нашим соотечественникам и их семьям в деле репатриации на территорию своей исторической Родины, которые непосредственно не вовлечены в процессы защиты и лоббирования общеармянских интересов за пределами Армении, являются простыми тружениками в различных отраслях экономики и, что главное, не утратили духовной связи с исторической Родиной, ощущают себя лицами, принадлежащими или тесно связанными с армянской нацией, и добровольно готовы вернуться в лоно своей национальной государственности.

В идеале, процесс «оптимизации» армянской Диаспоры предусматривает сохранение дееспособных, «идеологически-боеспособных» диаспоральных структур и ресурсов за рубежом и принятие всех тех представителей армянской Диаспоры в Республики Армения, которые не входят в данные структуры и не обладают ресурсами для отстаивания общеармянских интересов за пределами Республики Армения.

Использование потенциала зарубежной диаспоры для создания сети экономических, общественно-политических и иных связей – весьма распространенная мировая практика. Но далеко не всегда первое слово принадлежит государству. Нередко сама диаспора создает систему сетевых связей, и государство происхождения становится одним из звеньев этой международной цепи. Характерно, что современные государства все большее внимание уделяют именно той части диаспоры, которая поддерживает наиболее тесные контакты с титульным государством[1].

Продуманная правовая составляющая, создание соответствующих организационных механизмов и поиск финансово-экономических ресурсов для эффективной реализации репатриационной программы – наглядный показатель международно-гуманитарной социализации Республики Армения, становления и развития ее экономики, стремления армянской нации к консолидации в момент общей международной нестабильности. В самой ближайшей перспективе интеллектуальные и финансовые вложения в проектирование и осуществление программ по репатриации, в «оптимизацию» диаспоральных структур и ресурсов, адаптацию последних к возможным «асимметричным» задействованиям в общем контексте армянской внешнеполитической повестки станут важным элементом в нивелировании угроз и вызовов Республики Армения геополитического, социально-экономического, демографического и иного характера.

Михаил Агаджанян

преодоления демографического кризиса на основе комплексного решения вопросов семьи и рождаемости, здоровья и продолжительности жизни, миграции и расселения».

[1] Международный опыт защиты соотечественников за рубежом (Мировая и отечественная практика), М., 2002, http://www.mosds.ru/Izdan/InterExp.pdf.

Страны, признающие право своих соотечественников за рубежом на возвращение (на репатриацию)[1]

Армения	Ирландия	Сербия
Болгария	Испания	Словакия
Белоруссия	Китай	Финляндия
Венгрия	Литва	Франция
Германия	Молдова	Хорватия
Греция	Норвегия	Чехия
Израиль	Польша	Южная Корея
Индия	Россия	Япония

[1] Право на возвращение (право на репатриацию) заключается в том, что члены определенных этно-национальных групп имеют право на иммиграцию и натурализацию (получение гражданства) в стране, которая считается страной их этно-национальной принадлежности (происхождения).

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Առնոլդ Թոյնբիի այն թեզը, թե քաղաքակրթությունների հաջող գործառնությունը ենթադրում է նետված մարտահրավերներին համարժեք պատասխաններ, այսօր էլ չի դադարում արդիական մնալ: Հիմք վերցնելով Թոյնբիի այս պնդումը՝ փորձենք Հայաստանի ձեռքբերումներն ու անհաջողությունները գնահատել այդ համատեքստում: Հարկ է հավելել միայն, որ մի շարք հետազոտությունների համաձայն՝ Հայաստանն ունի ինքնուրույն քաղաքակրթական միավոր լինելու բոլոր հատկանիշները, և դրա համար էլ հայկական հիմնախնդիրներին Թոյնբիի եզրաբանությամբ մոտենալը միանգամայն արդարացված է:

Վերջին 20 տարիներին հայ հասարակությունը, անցնելով իր պատմության չափազանց դժվար մի փուլ, ավելի համատեղելի է դարձել իրեն շրջապատող արտաքին աշխարհի հետ և, որ ամենակարևորն է, ավելի համարժեք է արձագանքում տեղի ունեցող գործընթացներին: Տեղի է ունենում որոշակի դրական շարժ հայ հասարակության գիտակցության մեջ: Օրինակ, Էականորեն նվազել են խորհրդային-սոցիալիստական անցյալի «սևացման» կամ հակառակը՝ իդեալականացման միտումները, զուգահեռ՝ ձևավորվում է ժողովրդավարական համակարգի առավելությունների և թերությունների ավելի սթափ ընկալում: Համապատասխանաբար, զարգացում է ապրել նաև քաղաքական ընտրանին. հայտնի բոլոր հիմնախնդիրների առկայությամբ հանդերձ՝ այն ձեռք է բերել պետական և քաղաքական կառավարման որոշակի հմտություններ, որոնք այնքան պակասում էին հետհեղափոխական առաջին տարիներին: Այս ամենը ցուցիչներն են այն բանի, որ Հայաստանում ձևավորվում է մի հասարակություն, որն ավելի համարժեք է գնահատում սեփական հնարավորությունները և իր տեղը գլոբալ աշխարհում:

* * *

Որպես վերոնշյալ դիտարկումների քանակական արտահայտություն կարող է ծառայել համաշխարհային մի քանի վարկանիշային հրապարակումների տվյալների վերլուծությունը: Մենք կսահմանափակվենք վարկանիշային երկու հրապարակումների արդյունքների դիտարկմամբ: *Foreign Policy* հեղինակավոր հանդեսը, Thomson Dialog կազմակերպության հետ համատեղ, հրապարակում է *Failed States Index-ը£* Այն տարբեր կերպ են թարգմանում. անգործունակության ինդեքս, անկայունության ցուցանիշ, սակայն բոլոր պարագաներում դրանք արտացոլում են այս կամ այն պետության կայացած-չկայացած լինելը: Որպես երկրորդ վարկանիշային հրապարակում մենք վերցրել ենք *Economic Freedom Index-ը* ՝ տնտեսական ազատության ինդեքս, որն ամեն տարի կազմում է *Heritage (ժառանգություն)* հիմնադրամը: Այս վարկանիշի տվյալները, մեր կարծիքով, արտահայտում են այս կամ այն հասարակությունների ազատության ոչ դեկլարատիվ, այլ նյութականացված մակարդակը:

Դիտարկելով հենց այս վարկանիշային հրապարակումները՝ մենք ելակետ ենք ունեցել այն, որ դրանց ընդհանուր բնութագրերը բավական չափով ցույց են տալիս այս կամ այն պետության՝ շրջապատող աշխարհին համարժեքության աստիճանը:

Failed States Index 2006-ի կազմման ժամանակ հաշվի են առնվել հետևյալ բնութագրերը. 1. աճող ժողովրդագրական ճնշումը; 2. փախստականների և ներքին տեղահանումների ենթարկված անձանց զանգվածային տեղաշարժը; 3. դժգոհ և վրեժխնդրորեն տրամադրված խմբերի առկայությունը; 4. մարդկանց քրոնիկական և պերմանենտ տեղաշարժը; 5. տարբեր տնտեսական ճյուղերի անհավասար աճը; 6. տնտեսության կտրուկ անկումը; 7. պետության քրեականացումը և ապօրինականացումը; 8. հասարակական ծառայությունների վատթարացման աճը; 9. անձի իրավունքների ոտնահարումը; 10. «Պետություն պետության մեջ» գոյա-

նալու վտանգը; 11. խմբային (կլանային) ընտրանիների աճը; 12. այլ պետությունների կամ արտաքին խաղացողների միջամտությունը: Հաշվարկների մեթոդիկայի համաձայն՝ առավել կայացած երկրները հավաքում են ամենաքիչ միավորները:

Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանի ցուցանիշները, տարածաշրջանի երկրների՝ Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի, ինչպես նաև Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի համեմատ, ավելի բարենպաստ են: Նշենք, որ չնայած այսօր պնդում են, թե ԱՊՀ երկրներում առավել ժողովրդավարական են Ուկրաինան և Վրաստանը, Հայաստանի ցուցանիշներն այս չափանիշով (ցանկում 9-րդը՝ *«անձի իրավունքների ոտնահարում»)* համարյա չեն զիջում նրանց: Նշենք նաև, որ «դժգոհ և վրեժխնդրորեն տրամադրված խմբերի» առկայության մակարդակով (կետ 2) Հայաստանն էապես զիջում է իր հարևաններին, ինչը նույնպես կարելի է համարել անձի իրավունքների պահպանման թեև անուղղակի, բայց կարևոր ցուցիչ: Հայաստանի համար բերվող տվյալների համաձայն՝ մտահոգություն է առաջացնում ժողովրդագրական գործոնը: Խոսքը միայն 2-րդ կետի *(փախստականների և ներքին տեղահանումների ենթարկված անձանց զանգվածային տեղաշարժ)* մասին չէ. դա պատերազմի հետևանք է: Ավելի լուրջ, եթե ոչ՝ ամենալուրջ, հիմնախնդիր է 4-րդ կետում արձանագրվածը՝ *մարդկանց քրոնիկական և պերմանենտ տեղաշարժը,* այլ խոսքերով՝ միգրացիան: Հարկ է նշել, որ միգրացիան գլոբալացման գործընթացում հասարակության *ներգրավվածության* ցուցիչներից մեկն է և դրանով իսկ վկայում է բացվող նոր հնարավորություններին հասարակության համարժեք ռեակցիայի մասին: Բացի այդ, դրա արդյունքում առաջացող ֆինանսական հոսքերը դրականորեն են անդրադառնում հանրապետության տնտեսական բնորոշիչների վրա: Սակայն ժողովրդագրական «հյուծվածությունը» վաղ թե ուշ խիստ բացասաբար կանդրադառնա հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների վրա, և հարկ է ընդունել, որ այս մարտահրավերին Հայաստանում դեռևս համարժեք պատասխաններ ձևավորված չեն:

Տեղը	Երկիրը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	ընդհանրացված
43	Ռուսաստան	8	7.2	8	7	8	3.7	8.2	6.9	9.1	7.5	9	4.5	87.1
50	Բելառուս	9	5.1	5.5	3.5	8.5	6.3	9	7.5	7.3	6.8	8	8	84.5
53	Իրան	6.5	8.7	6.9	5	7.5	3	8.1	6.1	9.1	8	8.8	6.3	84.0
57	Չինաստան	8.5	5.1	8	6.6	9.2	4.5	8.5	7.3	9	5.5	8	2.3	82.5
60	Վրաստան	6	6.8	7.4	6.1	7	5.5	7.7	6.3	5.6	8.1	7.1	8.6	82.2
61	Ադրբեջան	6	8.1	7.3	5	7.5	5.9	8.1	6.5	6	7	7.5	7	81.9
82	Թուրքիա	7.2	6.1	7.3	5	8.6	4.1	6.1	5.7	5	6.4	6.9	6	74.4
86	Ուկրաինա	7	3.8	7.2	7.5	7	4.5	7	5.5	5.9	3	7.5	7	72.9
89	Հայաստան	6	7.1	5	7	6	5.1	7	6.5	6	4.5	5.8	5.5	71.5
128	ԱՄՆ	5	6	3	1	6	1.5	2.5	1	5	1	1.5	1	34.5
146	Նորվեգիա	3	1.5	1	1	2	1.8	1	1	1.5	1	1	1	16.8

Հատկանշական է, որ 12-րդ չափանիշով, այսինքն՝ օտարերկրյա պետությունների կամ արտաքին խաղացողների ազդեցության մակարդակով, Հայաստանը նկատելիորեն զիջում է իր տարածաշրջանային հարևաններին և այդ ցուցանիշով մոտենում է նույնիսկ Ռուսաստանին: Դա թույլ է տալիս պնդել, որ Հայաստանի ինքնիշխանությունը ոչ թե ձևական, այլ իրական բովանդակություն ունի, այսինքն՝ Հայաստանը համարժեքորեն է արձագանքում գլոբալ գործընթացների օբյեկտի վերածվելու սպառնալիքին: Այս առնչությամբ նշենք, որ ինքնուրույնության բարձր աստիճանը որևէ կերպ չի խոչընդոտում ժողովրդավարական ազատությունների զարգացմանը: Եվ այս, փոքր-ինչ պարզունակ եզրահանգումը լավ երևում է մեր դիտարկած հաջորդ՝ *Economic Freedom Index 2006 (Տնտեսական ազատության ցուցանիշներ)* վարկանիշային հրապարակման մեջ:

N	Պետություն	Բիզնեսի ազատություն	Առևտրի ազատություն	Դրամական ազատություն	Ազատություն կառավարությունից	Արտարժույթի ազատություն	Ներդրումային ազատություն	Ֆինանսական ազատություն	Սեփականության իրավունք	Ազատություն կոռուպցիայից	Աշխատանքային ազատություն
1	Հոնկոնգ	87.3	100.0	95.6	89.4	93.1	90	90	90	80	93.6
4	ԱՄՆ	92.3	76.4	79.3	68.8	85.0	70	90	90	75	97.5
32	Հայաստան	79.7	75.6	93.3	84.3	79.7	90	90	50	31	72.0
35	Վրաստան	70.9	62.6	96.0	92.0	75.2	50	70	30	20	81.2
83	Թուրքիա	65.9	76.0	78.7	72.7	64.7	50	50	50	32	44.6
107	Ադրբեջան	57.2	67.6	86.7	79.2	75.5	30	30	30	19	64.4
120	Ռուսաս-տան	66.1	62.6	93.9	68.9	68.1	30	30	30	28	65.6
125	Ուկրաինա	53.3	72.2	93.5	79.6	72.8	30	50	30	22	52.1
145	Բելառուս	53.9	62.2	85.9	46.4	49.8	30	30	30	33	64.2
150	Իրան	56.6	50.4	85.7	59.6	60.4	10	10	10	29	61.5

Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, Տնտեսական ազատության ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 32-րդ պատվավոր տեղը: Ուշադրության արժանի է «ներդրումային ազատության» բարձր ցուցանիշը, որը վարկանիշային հրապարակման առաջատարի՝ Հոնկոնգի մակարդակին է: Ներդրումային ակտիվությունը պայմանավորված է ոչ միայն *հայկական սփյուռքի* գործունեությամբ, որը շատ բանով փոխլրացնում է Հայաստանի հաղորդակցային մեկուսացվածությունը, այլ նաև հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ: Ինչպես հայտնի է, այս ոլորտում ցամաքային հաղորդակցությունները գործնական դեր չեն խաղում:

Այսպիսով, Հայաստանի դրությունը վարկանիշային հրապարակումներում, քանակական առումով, մատնանշում է այն, որ ընդհանուր առմամբ հայկական հասարակությունն ապաքինվել է հեղափոխական ցնցումից և ներկայումս ջանում է պատշաճ տեղ զբաղեցնել համաշխարհային հանրությունում:

Ընդ որում, ներգրավված լինելով գլոբալ զարգացումներում և ժողովրդավարության արմատավորման գործընթացներում (ինչը երևում է *տնտեսական ազատության ցուցանիշներից)*՝ Հայաստանը հիմնականում պահպանում է իր ինքնուրույնությունը (ինչն ակնհայտ է *անկայունության ցուցանիշներից):*

Գագիկ Տեր-Հարությունյան

ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ

Մամուլի ազատության վարկանիշն աշխարհում

«Լրագրողներ առանց սահմանի» (այսուհետ՝ ԼԱՍ)՝ հասարակական միջազգային կազմակերպություն է: Կենտրոնատեղին Ֆրանսիայում է, ունի խորհրդատվական կարգավիճակ ՄԱԿ-ում: Կազմակերպությունը գործում է բոլոր հինգ մայրցամաքներում իր ազգային բաժանմունքների (Ավստրիա, Բելգիա, Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Շվեդիա և Շվեյցարիա), գրասենյակների (Բանգկոկ, Լոնդոն, Նյու Յորք, Տոկիո և Վաշինգտոն), ինչպես նաև մի շարք երկրներում աշխատող ավելի քան 120 թղթակիցների միջոցով: ԼԱՍ-ը սերտորեն համագործակցում է նաև մամուլի ազատության տեղական և տարա-ծաշրջանային խմբերի հետ, որոնք կազմակերպության ցանցային անդամներն են (Աֆղանստան, Բանգլադեշ, Բիրմա, Կոլումբիա, Դեմոկր. Կոնգո, Էրիթրեա, Ղազախստան, Պակիստան, Պերու, Ռումինիա, Ռուսաստան, Սոմալի, Միացյալ Նահանգներ և Թունիս): ԼԱՍ-ը լուրջ աշխատանքներ է իրականացնում աշխարհում մամուլի ազատության վարկանիշների ուսումնասիրության ոլորտներում և ներկայացնում տարեկան հաշվետվություններ այդ ուղղությամբ: Վարկանիշային հաշվետվությունները, որպես կանոն, հիմնված են լինում այդ իսկ երկրներում իրականացված հարցումների մեթոդաբանության վրա: Հատկանշական է, որ կազմակերպության տարեկան հաշվետվություններում ներկայացված վարկանիշները վերաբերում են մամուլի ազատությանը և ամենևին ոչ լրագրության որակին:

Մամուլի ազատության վարկանիշն ըստ երկրների 2002-2006թթ.

№ 2006	Երկիր	Վարկանիշ				
		2006	2005	2004	2003	2002
1	Ֆինլանդիա	0.50	0.50	0.50	0.50	0.50
6	Էստոնիա	2.00	1.50	2.00	2.50	
50	Իսրայել	12.00	10.00	8.00	8.00	30.00
89	Վրաստան	21.00	25.17	27.50	17.33	
98	Թուրքիա	25.00	25.00	37.25	35.00	33.50
101	Հայաստան	25.50	26.00	23.50	25.17	
105	Ուկրաինա	26.50	32.50	51.00	40.00	40.00
135	Ադրբեջան	47.00	51.00	49.67	34.50	34.50
147	Ռուսաստան	52.50	48.67	51.38	49.50	48.00
151	Բելառուս	57.00	61.33	54.10	52.00	52.17
162	Իրան	90.88	89.17	78.30	89.33	48.25
163	Չինաստան	94.00	83.00	92.33	91.25	97.00

Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ